№ 47 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 3

1906
ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

№ 47 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 բ., տասն ամսվանը՝ 9 բ., ինն ամսվանը՝ 8 բ., 8 ամսվանը՝ 7 բ., եօթ և վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ. և մի ամսվանը՝ 1 բուբլի։ Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի վաճառականների աւագը եւ նրա ընկերները

խնդրում են պ.պ. Թիֆլիսի վաճառականներին, որոնք ունեն դասակարգային վկայական, ընտրել

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,

որը կայանալու է կիրակի, մարտի 5-ին, առաւօտեան 11 ժամին, վաճառականների աւագի տեսնում (Լերմօնտովսկի փողոց № 16)։ 1—1

Պետրոս, Արտաշէս և Շուշանիկ Ասլանեանցները յայտնում են ազգականներին և բարեկամներին՝ առաջինը իր ամուսնու, իսկ երկրորդները իրանց անմոռանալի մօր՝

ՄԱՐԻԱՄ ԱՍԼԱՆԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ երկարատև ծանր հիւանդութիւնից յետոյ։ Ամբիծքը շաբաթ, մարտի 4-ին, երեկոյեան ժամը 5-ին, իսկ յուղարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի, ամսոյ 5-ին, առաւօտեան ժամը 10-ին (Георгіевская площадь № 6) դէպի Նորաշէն եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։ 1—1

Հոփսիմէ Տէր-Յովհաննիսեանը իր որդիներով, Գրիգոր Դանիէլեան և Միրզա Յովսէփեան յայտնում են ծանօթներին՝ առաջինը իր եղբօր, երկրորդը իրանց քեռու, երրորդը և վերջինը իրանց խնամատարի—Շուշի քաղաքի Ագուլեաց եկեղեցու քահանայ՝

ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԱՌՈՒՄԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսում, փետրվարի 27-ին։ Ամբիծքը շաբաթ օրը, ամսոյս 4-ին, երեկոյեան։ Յուղարկաւորութիւնը ամսոյս 5-ին, կիրակի, Հալաբարի Կարմիր-Աւետարանի Շամքորեցոց եկեղեցու բակում գտնվող շինութիւնից դէպի նոյն եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։ 1—1

Շաբաթ, մարտի 4-ին

ՄԻՆԱՍ ՄԻՆԱՍԵԱՆ ԱԲԻԵԱՆՑԻ

մահվան տարեդարձի օրը Զրկինեան եկեղեցում (Գրիբոյեդովսկի փողոց) կը կատարվի պատարագ և հոգեհանգիստ, որի մասին այրի Մարգարիտ Մինասեան Աբիեանցը յայտնում է ազգականներին և ծանօթներին։ Հոգեհանգիստի սկիզբը ցերեկվայ ժամը 11½-ին։ (ու.շ.) 1—2

Մարտի 1-ին վախճանվեց

ԻՇԽԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՐԱՖԱՅԷԼԵԱՆ ԱՄԱՏՈՒՆԻՆ

որի մասին խորին վշտով յայտնում է հանդուցեալի քոյր Նունէ Բաֆայէլեան Գոլուխանեանը իր ամուսնու և որդիների հետ միասին։ Հոգեհանգիստը, այսօր, մարտի 3-ին, երեկոյեան ժամը 6½-ին, Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում (Մէքայէլեան փողոց, Բէալական դպրոցի դիմաց)։ Թաղումը շաբաթ, մարտի 4-ին։ Պատարագի սկիզբն է ցերեկվայ 10½-ին։ 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հակադրութիւններ. Վերջին տեղեկութիւններ. Դեռ չեն դադարում. Դէպքերը Վրաստանում. Տեղեկութիւններ գաւառից. Մամուլ. Հայ-Թուրքական բանակցութիւններ Գանձակում, Ով է մեղաւոր. Ախալցխայի հայոց ուսումնարանները Վերաբացումը. Նամակ Ալէքսագրոպոլից. Նամակ Բաթումից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատճառներ և հետևանքներ։

ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Հայ-Թուրքական խորհրդակցութեան վերջին երկու նիստերում շատ մանրամասն քննութեան ենթարկվեցին յանցաւորներին պատժելու, թալանները վերադարձնելու կամ վնասները հատուցանելու խնդիրները։

Թուրք պատգամաւորները աշխատում էին մի կողմից այն միաքը պաշտպանել, որ անցեալը պէտք է մոռանալ և նրա առիթով ոչ մի նոր պահանջներ չանել, իսկ միւս կողմից առաջարկում էին դիմել այդպիսի խնդիրներով դատական հաստատութեան, թողնելով նրան կայացնել վճիռներ դատաստանական կարգով։

Թուրք պատգամաւորներից մի քանիսը աշխատում էին պատժի և հատուցման սկզբունքը վերացնել, համարելով աւերողներին և թալանողներին անպատասխանատու իրանց գործերի համար, որովհետև նրանք գտնվել են միահամուռ մի այնպիսի շարժման մէջ, որ կրում է եղել անգիտակցական և տարերական բնաւորութիւն։

Միւսները (օրինակ Զիաթխանով) պնդում էին, որ աւերողները և սպանողները եղել են խուլիգաններ, որոնք տեսնելով կողոպտի և թալանի հնարաւորութիւն, ասպարէզ էին նետվել և իրանց աւազակային ու արիւնային բնազդներին ազատութիւն տուել ամենասանձարձակ կերպով։ Կային և այնպիսիներ (Ադայէվ), որոնք բացատրում էին, որ գործողները բէգերն էին և ուրիշ ազդեցիկները, որոնք զեկավարութիւն էին վերցրել իրանց ձեռքը, որպէս զի պաշտպանեն Թուրք ժողովուրդը հայկական յարձակումներից, և եթէ Թուրքերը հրդեհում էին հայկական տները և խանութները, այդ անում էին այն պատճառով, որ նրանք այդ եղանակով ցանկանում էին հաւասարակշռել հայերի յարձակումները։

Որքան էլ անտրամաբանական լինէին, բայց և այնպէս այդ խորհրդածութիւնները բերում էին նրանց այն եզրակացութեան, որ ոչ ոքի չը պէտք է պատժել ընդհանրութիւնների համար, ոչ ոքի չը պէտք է պատասխանատուութեան ենթարկել թալանի և կողոպտի համար։ Թուրքերի ճառախօսութիւնները նպատակ ունէին ապացուցելու, որ այդպիսով կարելի է լաւ հաշտութիւն և խաղաղութիւն հաստատել, որովհետև եղած դժբախտութիւնները արդէն անցել են, իսկ թալան պահանջելը կարող է զրգռել մարդկանց և յուզել կրքեր։

Որքան էլ օտարոտի թւայ այս հայեացքը, բայց նա գտնում էր ջերմ պաշտպաններ, որոնք խօսում էին, իրանց պերճախօսութեան բոլոր մարգարիտները հանդէս բերելով մի առանձին ջանք ու ճիգով։

Հայ պատգամաւորների վրա ծանրացել էր երկու տեսակ պարտականութիւն։ Նրանք պէտք է մի կողմից բացատրէին և ապացուցէին Թուրքերին, որ յանցանքը, եթէ չէ պատժվում, գտնում է խրախուսական և ծնում է նոր յանցանքներ, իսկ մէւս կողմից հասկացնէին, որ ժողովրդական ժողովները չեն կարող բաւարարութիւն տանալ, մինչև որ նրանք չը տեսնեն մարդասպանին, գողին, աւազակին, աւերողին զսպված, իսկ զրկվածներին վարձատրված։

Հայերի և Թուրքերի մէջ տեղի ունեցած պայքարը բնորոշ է իրրև մի լուսաբանութիւն այն բանի, թէ ինչ հայեացքներ են տիրում երկու տարբերի զեկավարող շրջաններում մի այնպիսի խոշոր հարցում, ինչպէս է կոտորածներ, աւերներ կազմակերպելու գործը, նրանց համար պատասխանատուութիւն կրելը։

Ցաւմենայն դէպս այդ խոշոր խնդիրը ենթարկվեց մանրամասն քննութեան և պարզվեց խորհրդակցութեան մասնակցող վարչական անձանց համար բաւական պատճառաբանված կերպով։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ղազախի գաւառից Թիֆլիս եկած անձինք մեզ հաղորդեցին, թէ Քարվանսարա գիւղում տեղեկութիւններ են հասել, որ իբր թէ Թուրքերը հրոսակախմբեր են հաւաքել Բաշքենդ գիւղի շրջակայքում և սպառնում են յարձակվել գիւղի վրա։ Գիւղացիների համար շատ դժուարանում է ցանքսեր կատարելը, քանի որ վտանգների լուրերը չեն դադարում։

—

Կովկասեան Փոխարքան ստացել է Շուշուց փետրվարի 25-ին հետեւեալ հեռագիրը. «Շուշի քաղաքի հայերի և Թուրքերի պատգամաւորները այսօր նիստ գումարելով քաղաքային վարչութեան մէջ, միաձայն որոշեցին խնդրել Զերդ պայծառափայլութեան թողնելու, մինչև լիակատար խաղաղութիւն հաստատվելը հայերի և Թուրքերի մէջ, զեներալ-մայոր Գոլոշչապովին իր թոռուցիկ խմբով, որի եռանդուն անաչառութեան և կորուստ գործունէութեան շնորհիւ շուտափոյթ վերականգնվեց ցանկալի խաղաղութիւնը։ Պատգամաւորները երկիւղ են կրում, որ մի գուցէ զեներալ Գոլոշչապովի շտապ հեռանալը այստեղից՝ ազդէ կեանքի նորմալ ընթացքի վրա, նամանաւանդ, որ մօտենում է դաշտային աշխատանքների և քոչերի ժամանակը։ Նախագահ պատգամաւորական ժողովի՝ քաղաքագլուխ Քալանթարով»։

—

Ղարաբաղի թեմական առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը Շուշուց հեռագրում է հայ-Թուրքական համագումարի պատգամաւորներին, որպէս զի նրանք միջնորդեն Փոխարքայի առաջ թողնելու զեներալ-մայոր Վ. Ի. Գոլոշչապովին Ղարաբաղում, մինչև որ քաղաքի և չորս գաւառների՝ Շուշու, Զանգեզուրի, Ջիբրայէլի և Ջիվանշիրի ազգաբնակութեան մէջ խաղաղութիւնը բոլորովին վերականգնվի։ Զեներալ Գոլոշչապովի կօրբէկտ և արդար վարմունքը միանգամայն հաւատ է ներշնչել ժողովրդի մէջ դէպի իշխանութիւնը և խաղաղասիրական հաստատուն հիմք է դրել հայերի ու Թուրքերի մէջ։

—

Բագու, 1 մարտի։ Երէկ, Շահի փողոցում, ոստիկանութիւնը տաք հրացանաձգութեան բռնվեց՝ բերդաններով և տարձանակներով զինված Աման Մուրադի 15 սպանողների հետ, որ դիրք էին բռնել մի տան մէջ։ Գրիսատ Մարտիրոսովը բռնեց մարդասպաններից մէկին, որից և խլեց նրա բերդանը։ Միւս ընկերները խլեցին բերդանը պրիստաւի ձեռքից և փախուստի դիմեցին, միաժամանակ կրակելով ոստիկանութեան վրա։ Բռնված են մի քանիսը, իսկ միւսներին աջողվեց փախչել։ Գեներալ-նահանգապետի հրամանով էտապով ուղարկվում են իրանց հայրենիք՝ հատրաական անդորրութեանը վնասակար 15 մարդ։

—

Զանգեզուր, փետրվարի 25-ին

Գնդապետ Վեվէրն փոխելով իր ընթացքը, հասաւ Քիչիկ-Հաքեար գեղի ապերի Ալիկալու կոչված Թուրքական գիւղերը։ Փետրվարի 19-ին հանելով Բիշարաթի գիւղը, Թուրքական պահակները դիրքերից սկսեցին միանուագ պարպել զօրքի վրա։ Նրանք ուշադրութիւն չը դարձրին ծածանվող դրօշին և փողի ձայնին։ Զօրքը երեք մասի է բաժանվում. նպատակ են դնում ձերբակալել դիրքերի մարդկանց։ Կռիւը տաքանում է։ Շուտով Թուրքերը լռում են և թնդանօթի հարուածների շնորհիւ, նրանց դիրքը դատարկվում է։ Սպանվածների թիւը [illegible] է, զօրքից վիրաւոր կայ։ Դիրքերում բռնվել են 10 հոգի, որոնցից մէկը փախչել է փորձել և խիստ գնդակահարվել է։ Մնացած 9 հոգուն էլ ստրաժնիկների հսկողութեամբ, քիթ ու պռունգ արիւնվայ, ծեծած ու ջարդած Գօրիս տարան։ Այս դէպքից յետոյ զօրքը անկարգութիւնների է դիմել։

Ի՞նչ կը լինէր արդեօք մեր օրը և որպիսի նախատինք մենք կը ստանայինք, եթէ այդ տեսակ մի դիմադրութիւն որ և է հայ գիւղ ցոյց տար։ Սակայն, Թուրքերի արած գեղծումների վերաբերմամբ ադմինիստրացիան ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և մեզ մօտ մասների արանքով է նայում։

Փետրվարի 21-ին, երեկոյեան ժամի 6-ին, Խնձորեակ գիւղում իրարանցում ընկաւ, թէ Բէշպարմակի ձորից ոչխարը, տաւարը Թուրքերը քշեցին տարան։ Գիւղացիք խսկոյն հասան և մօտ մի ժամից յետոյ լուր բերին, թէ երեք զինված Թուրքեր շրջապատել են Դինգիզանց Վարդազարի որդի 13 ամեայ չոբան Նիկոլային և նրա ընկերին. վերջինիս աջողվել է ժայռից ցած ընկնել ազատվել, իսկ Նիկոլային տարել են ոչխարի սուրուի հետ։ Հետեւեալ առաւօտ Թուրքերը վերադարձրին ոչխարի սուրուն և փոքրիկ չոբանին. ոչխարները լրիւ չեն։

Փոքրիկ չոբանը պատմում է. «Երեկոյեան դէմ էր երբ ուզում էինք ոչխարները բլրի միւս կողմից դէպի փարախ քշել, յանկարծ երեք զինված Թուրքեր մեզ շրջապատեցին։ Ընկերս փախաւ և ժայռից ցած ընկնելով ազատվեց, ես էլ ուզում էի նրան հետևել, Թուրքերից մէկը մաքուր հայերէնով ասաց, որ ինձ չեն սպանելու։ Ես կանգնեցի։ Նրանք մօտեցան, ինձ բռնեցին և փոքրիկ ձորակով ցած տարան դէպի Ուղէցի գիւղը։ Երկու չոբաններ իմաց տուին գիւղացիներին, որ հայ են բերում դէպի գիւղը. իրարանցում ընկաւ գիւղը. ինձ տանողները կանգ առան շփոթված։ Գիւղից զինված մարդիկ դուրս եկան և ինձ բերողներին նկատելով՝ շեշտակի հրաւաձեգ սկսեցին։ Երեքից մէկը փախաւ, երկուսն էլ քարերի եռրում դիրք մտան, իսկ ես Ցացի մեկուսացած։ Ինձ բերողները խրեցին դիմացի հրացանակիրներից մէկին սպանեցին և երկրորդին էլ վիրաւորեցին։ Ամբոխը մեծացաւ։ Սուգ ու շիւան բարձրացաւ գիւղում։ Իմ դրութիւնը սոսկալի էր։ Շուտով մի խումբ կանայք, և նրանց ետքից էլ մի խումբ մարդիկ, մեզ հասան, ինձ բերողներին հարձակեցին, թքեցին նրանց վրա, և ինձ սիրտ էին տալիս, թէ մի վախենայ։ Մի թրքուհի էլ, որի եղբայրը, ինչպէս երևում էր, սպանված էր Թուրք-հայկական կռիւներում, ասում էր՝ ոչինչ շահ չունեմ, երբ եղբօրս սպանողը ազատ և անայլայ մի մարդ է և նրա տեղ դու պիտի ի զուր սպանվես. դու անմեղ ես, մի վախենայ, քեզ ձեռք չեն տայ։ Բացի մի քանիներից, ամբողջ գիւղը դէմ էր ինձ սպանելուն, որոնց մեծամասնութիւնը պղնձագործներ էին։

Գիւղում տիրում է երկու ուղղութիւն. տիրող մեծամասնութիւնը խաղաղասէրներն են և նրանք ինձ առաջնորդելով՝ հայ չոբաններին յանձնեցին»,

Ուրիշ նորութիւններ առ այժմ չը կան։

Թուրքերը մի քանի հայ գիւղեր նամակներ են ուղարկել, որով խնդրում են ժամադիր լինել Գօրիս գնալու ու հաշտութեան մասին մտածելու և խօսելու։

Սազանդարեան

—

Գնդապետ Իսայէվիչ, Դանձակի ժամանակաւոր գեներալ նահանգապետի բացակայութեան պատճառով, զեկուցանում է Փոխարքային հեռագրով. «Օմիրբասի և ճանապարհորդների կողոպտման (Բարդայի ու Եւլախի մէջ) քննութիւնը յանձնված է կատարելու գաւառապետին։ Գեներալ-նահանգապետը ճանապարհվեց նահանգը անձամբ ցուցմունքներ առնելու իր տեղերում»։

ԴԵՌ ՉԵՆ ԴԱԴԱՐՈՒՄ

(Նամակ Շուշուց)

—

Այնպիսի արմատական միջոցներ, ինչպիսին գեն. Գոլոշչապովի միսիան էր ձեռք առել, մեզ զրկանապէս այն համոզմանն էին բերում, այն հաւատը ներշնչում, որ խաղաղութիւնը, մանաւանդ Շուշի-Եւլախ խճուղու վրա, կատարեալ կը լինեն և վերջնական։

Սակայն խաղաղութեան հմայքը մեզ յուսախաբեց։

Թուրքերը խախտեցին կառավարութեան հրամանը։

Նրանք խախտեցին իրանց ազնիւ խոստումը։

Այն անցքը, որը մի երկու ամիս առաջ կանգնեցրել էր Թուրքերի հաղորդակցութիւնը, որի անունը սարսափ էր ազդում նրանց և մի փոքրիկ զսպումը սով սպանում, ճիչ բարձրացնում, քաղաքական աշխարհի ուշադրութիւնը դրաւում, քննադատութեան, բողոքի, պարսաւանքի նիւթ դառնում, առա այն անցքը—Ասկարանը, այսօր մաքրված, զտված հայերից տէրութեան հրամանով, այսօր էլ Թուրքի յանդգնութեան պատուանդանն է դարձել։ Ասկարանի անմատչելի արուարձաններում, նրա հարուստ այգիներում, Ջրաղացներում Թուրքը յանդգնում է ազատհաւարձակ, իր սայլերով ոտք կոխել, քանդել Ջրաղացները և քաշել տանել Ջրաղացաքարերը։

Մի այլ տեղ նա կարում է հայ գիւղացու առաջը, յարձակվում վրան և մանվան սպառնալիքներով խլում տանում նրա բեռնած գրաստները, տաւարը։

Մի երրորդ տեղ, ասպատակութիւնը աւելի յանդգնէ չափեր է ընդունում։ Հէնց խճուղու վրա, Բարդայում, ուր դեռ Գոլոշչապովի անաբեկող թնդանօթների որոտն է մարդու ականջ խլացնում —ահա այդտեղ Թուրքական վայրագութիւնը դեռ իր անզուսպ դերի մէջն է, դեռ զէնքի ապատան, աւարի ու սպանութեան ծարաւ։ Եւ այն օրը, երբ Փոխարքայի գիւանատան շեմքերում հայ-Թուրքական խաղաղութեան դաշինքի ամուր կապեր են որոնվում, երբ խաղաղ ժողովուրդն աչքը յառել է հայ-Թուրքական համագումարին և սրատարոի ակնկալում է մի մեծ աւետիք—այդ օրն ևս, գտնէ այդ օրը Թուրքը մի բոպէ իրան հանգիստ չէ պահում։—Նա յարձակվում է խճուղու հանրակառքերի վրա, որոնցից մէկը առաջ սլանալով փախչում ազատվում է, իսկ միւսը հրոսակախմբի բաժին դառնում, թալանվում, կողոպտվում մինչև վերջին ծայր, և հայտնի տարափի տակ ազատում միայն ճանապարհորդ հայերի մերկ ու տկլոր անձը։

Գեներալ Գոլոշչապովը վերջացած համարելով իր միսիան, եկել էր Շուշի իր վերջնական հրահանգները տալու և վերադառնալու Թիֆլիս։ Լսելով ճանապարհի ապահովութեան այդ վատնումը, նա հեռագրով պահանջեց, որ իր Բարդայով անցնելու ժամանակ գողերն ու յափշտակված իրերը յանձնվեն իրան, իսկ հակառակ դէպքում, մինչև յանցաւորներին ալը, օրական 400 բուբլի տուգանք վճարեն այն գիւղերը, որոնց սահմաններում կատարվել է ասպատակութիւնը։ Ո՞ւր է, թէ լինի...։

Նոյնպիսի կարգով տուգանքադրվել են և այն գիւղերը—Ղզալա և Մարզու, որոնց մէջ մեզ մի երկու ամիս առաջ գլխատվեցին պրիստաւ Միրզայեան և կապիտան Իկօնիկով։ Այդ գիւղերից Ղզալա հայ գիւղը խսկոյն վճարել է տուգանքը 1800 բուբլի, իսկ Մարզու Թուրք գիւղը դեռ չէ։

Արդեօք ովքեր կարող են սպանած լինել այդ ատաճանաւորներին Ադամի ծայրում, դեկտեմբերեան օրերին, բազմահազար Թուրք խուժանի աչ ու ձախ վխտացող վոհմակների առաջ. մի՞թէ հայը, այն էլ Ղզալայի հայը, որ այդ գժոխքն իջնել չէր համարձակվիլ, և սակայն պարտաճանաչ գտնվեց գեներալի իրաւացի թէ անիրաւացի հրամանն անմիջապէս կատարել։ Թէ՞ Թուրքը, որ կատարեց ոճիրը և այսօր ազատ է և պատժից և՛ տուգանքից...։

Ո՛չ, անթիւ են փաստերը, որ Թուրքը խաղաղվել չէ կարող։ Կարծես մի ներքին խրախոյս, մի հրապոյր, դարձնում է նրան համարձակ, անզուսպ, անվախ։

Իսկ տխուր են այն փաստերը, որ Թուրքը չէ լսում և չէ կատարում պատութեան հրամանը։

Եւ իզուր է Գոլոշչապովն իր միսիան վերջացած համարում։ Թուրքի հոգեբանութեան խորքը թափանցելը երկար ուսումնասիրութեան է կարօտ։ Նրանց «անկեղծ խօսքին» հաւատալը առնուազը միամտութիւն է։

Այդ կասկածը, այդ փաստը յայտնեցին նրան և պատգամաւորները հրաժեշտի միջոցին։ Նա յուսադրեց։ Բայց ի՞նչ կարող է անել եթէ հրաման ունի վերադառնալու։

Եթէ չաքուճը վեր կացաւ Թուրք աւազակի գլխից, անկասկած է, որ էլի սև ամպեր պէտք է դան կուտակվեն մեր գլխին։

Հաւատը շատ քիչ է և հաւատալը դժուար։ Իսկ հայի ախորժակը փակվել է արեան դրամներ նորոգելու և մենամարտի ասպարէզ սարքելու։

Հերիք է, զսպեցէք, վերջը արմատից կտրեցէք։

Տ.

3. Գ. Փետրվարի 25-ի գիշերը Մաքիբէկլուի Թուրքերը յարձակվելով Շուշիքէնդի ձիերանոցի վրա՝ այրեցին մի տուն և սպանեցին մի հայի։ Գոլոշչապովի գալուց յետոյ սա սպանութեան առաջին դէպքն է։ Եւ ահա դեռ նրա ոտքը Ադամ չը դրած, հեռանալու լուրը կայծակի արագութեամբ է տարածվում և Թուրքերին գէնքի կանչում։—Զէ, անհրաժեշտ է Գոլոշչապովի միսիան,—մտածեցին մեր պատգամաւորները և հեռագրեցին Փոխարքային, որ նա թողնվի դեռ իր միսիայի մէջ։

Տ.

ԴԷՊԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

—

Քութայիս. Փետրվարի 24-ին առաւօտեան բանտից ազատեցին քաղաքական յանցանքի համար բանտարկված 12 հոգի։ Երէկ գիշեր Շերենկէնի նախագահութեամբ քաղաքական յանցաւորների հարցեր քննող մասնաժողովի նիստ կայացաւ, և 2-րդ օրն առաւօտեան բանտից ազատվեցին Մ. Քիքոձէ, Ս. Զափարիձէ և Ն. Զիկվայիձէ։ Բանտից ազատվածները ասում են, որ ոչ մի մարդ ոչինչ հարցեր չէ առաջարկել և ոչ էլ քննութիւն է եղել։ Զը գիտեն ինչու համար են բանտարկվել։

(Պատաբա Գազէթի)

—

Զերնօմօրեան նահանգապետը Սօչիից փետրվարի 26-ին հեռագրում է Փոխարքային. «Այցելելով Գագրի և Աղվեր, հաղորդում եմ Զերդ Պայծառափայլութեան, որ յիշեալ տեղերում և ամբողջ Սօչիի շրջանում խաղաղութիւն է տիրում, մեծ քանակութեամբ փախստական յեղափոխականների որոնումները և կալանաւորումները շարունակվում են։ Գագրիում և Աղվերում հակակառավարական շարժումը առանձին խիստ և լուրջ բնաւորութիւն չէ ստացել և կարելը բռնի կերպով չէ խախտվել։ Շերէմետիէվկու սպանութեան մասին կատարված քննութեան գողացված գործը նորից է վերանատուում քննիչը, որ այժմ արդէն այդ սպանութեան յանցաւորների հետքը գտել է։ Սօչի երկրորդ քննիչ է ուղարկված գործերի շատութեան պատճառով։ Նովորոսսիյսկում մեղադրանքները յարուցված են այն կալանաւորների դէմ, որոնք առաջարկված պահանջները չեն կատարել»։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Վերի-Սարալ, Բօրչալուի գաւառ, փետրվարի 18-ին։

Բօրչալուի գաւառի բոլոր կողոպտված կալածատէրերը, գործարանատէրերը և առևտրականները Շուլաւերում անհամբեր սպասում են գաւառապետ Բեազանովի գալուն։ Դրանց մեծամասնութիւնը բոլորովին զրկվել է նիւթական միջոցներից։ Դաշտային աշխատանքների ժամանակ է, բայց ոչ միջոցներ ունենք և ոչ ապահովութիւն կայ, որ գնանք նորից աշխատանք, աւերակները նորոգենք, աշխարհը շինացնենք։

Թուրքերը այժմ ազատ գնում գալիս են Շուլաւէր և ուրիշ հայ գիւղերը։ Երբ նրանց հարցնում եմ թէ չէք վախենում հայերից, որ համարձակ գնում գալիս էք, Թուրքերը ասում են, թէ իրանք վստահ են հայերի վրա, որ նրանք ի զուր տեղը նրանց չեն գիպչի, եթէ որ Թուրքերը նրանց չը նեղացնեն։ «Ինչ անենք, ասում են Թուրքերը, սարքի տունը Աստուած քանդի, նահլաթ շէյթանին, որ մեզ ճանապարհից հանեց։ Մենք էլ հայերի մօտ սկսինս մնացինք, մեզնից ինչ որ ապրանք, խանութ և դուքան կար հայերի մօտ, նոյն իսկ ընտանիքներ, բոլորը ապահով պահեցին և մեզ վերադարձրին, իսկ հայերի ամբողջ կարողութիւնը մեր անիրաւները բոլորը դաղրդամիշ արին քաղցած գայլերի նման»։

Գիրվանեներից շատերն էլ առաջարկում են, որ շուտով գնանք և կրկին գործ սկսենք։

Հետեւեալ խօսակցութիւնն է սկսվում մեր մէջ.

«Գարուն է, ասում են, արևները նորոգելու ժամանակ է, եկէք ձեր մուլքերին տէրութիւն արէք։ Ռուսի տէրութիւնը խօմ չէ մեռել, որ ձեր մուլքերը բրախէք ու գնաք»։ Ես պատասխանում եմ. «Ախր ո՞ր տեղ գանք, չէ՞ որ դուք ասուն, տեղ բոլորն այրեցիք և տաւար, ոչխար, ցորեն, գարի բոլորը յափշտակեցիք. կամ պէտք է մեր բոլոր ՀՇամները ձեր յօժար կամքով վճարէք մեզ կամ մենք պէտք է դատաստանով պահանջենք ձեզանից»։—«Է՞հ, քիր վա, անցեալները մոռացէք, չարժէ անց կացած բաների վրա մտածել. Աստուած բախտ տայ ձեզ, դուք համբերատար մարդիկ էք, էլի կարող էք աշխատել. միթէ պանից առաջ մեր թարաքամէքը ձեր եզը, կովը, ձին, ոչխարը չեն գողացել, ձեր զօրուղները չեն արածացրել, ձեր խուրձերը չեն գողացել և դուք՝ հայերդ, մեզ միշտ եօլա էք տարել։ հիմա էլ սար գնալու ժամանակ է գալիս, պէտք է հաշվենք»։

—Ախր մենք ձեզ ի՞նչ ենք արել, որ ձեզ հետ հաշվենք, Բօրչալուի հայերս խօմ ձեզ, Թուրքերիդ, մի վնաս չենք տուել։

—Հէնց այդ է, որ դուք չէք տուել, իսկ մենք տուել ենք։

—Ուրեմն տուէք մեր բոլոր վնասները և մեղաւորներին յանձնենք կառավարութեան ձեռքը, որ պատժվեն, և հաշտութիւնը կայացած է։

—Եթէ իշխանութիւնը մի քանի յանդգնագիտերի մէջը էկզէկուցիա դնէ, որոնք միշտ չարիքի պատճառ են դառնում, և եթէ մենք՝ Թուրքերս էլ հաւատանք, որ մեղաւորները կը պատժվեն, այն ժամանակ մեղաւորները կը յանձնվեն. բայց այսօր աւազակին ըռնում

են, իսկ վաղը արդարացած թողնում են, և յեսոյ այդ աւազակները կուժն ու կուլէն մեր գլխին են կոտրում։

—Ճշմարիտ է, որ ձեր ազալաբ-վէքիլները ասում են թէ հայ կալուածատէրերը Թուրք ժողովրդին շատ են նեղացնում և դրա համար էլ ժողովուրդը զայրացած՝ այդպէս աւերից հայ կալուածքները։

—Ոչ, դա բոլորովին անողոքութիւն կը լինի մեր՝ Թուրքերիս կողմից, որ ասենք թէ հայ թաւադները մեզ ճնշել են, ընդհակառակը, հայ թաւադները ինչ եկել են Բօրչալու, մենք հացի տէր ենք դարձել, աչքներս բացվել է, և լաւ ու վատը ճանաչում ենք։ Մի բզոնեներիցը շատերս հարստացել ենք, տաւարի, ոչխարի և փղի տէր ենք դարձել։ Մանթաշեանցն ու Արամեանցն էլ ասենք, ամէն տեղ արխեր, կամուրջներ շինեցին, ճանապարհներ բաց արին, ջրատարներ շինեցին, մեզ բամբակի, կանեփի և ուրիշ տեսակ սերմեր բաժանեցին ձրի, մեզ տանց տոհոսի փող էին տալիս հնձի համար, հացներս հատած ժամանակը մեզ ցորեն էին տալիս առանց տոհոսի, նրբեմն էլ մեր ցորենները խաթրիչուն հնձում էին մեքենաներով, ամէն մի նոքար Թուրքին տարէնը 180 ր., 240 ր., 300 ր. ռոճիկներ էին տալիս և կողմնակի էլ օգնում էին իրանց ծառայողներին։ Մենք հայ Թաւադներին լաւ ենք ճանաչում. բոլորն էլ բարի մարդիկ են։ Ոչ մէկն էլա մեր ջառուի տակ չեն գցել, պրոտոկոլ չեն գրել տուել մեզ վրա, թէկ միշտ նրանց անտառներից փայտ ենք կտրել, զօրուղներն ենք պատպարել և շատ ժամանակ էլ բանէրն կանօնաւոր չենք վճարել։ Մենք Մուրինօվին էլ ենք լաւ ճանաչում. մօտ 20 տարի է, որ Բօրչալումն է և մեզ՝ Թուրքերիս միշտ օգնել է։ Անցեալ տարիները, երբ Բօրչալում էլ սով էր, նա 2000 պուդ ցորեն բաժանեց լաբարատեցիներին, գեօրբրիցիներին, մաժայեցիներին և ոչ մէկիդն էլ յետ չը պահանջեց, դեղն ու դարմանն էլ խամ ամենքիս համար մուֆտա պատրաստ էր։ Հէնց այս տարի 800 բուբլի հնձի փող տուեց գեօրբրիցիներին և մաժայեցիներին, որ գետ չեն վճարել պատիսանները։

—Իսկ ձեր Թուրք ազալարները և բէկերը ինչպէս են վարվում ձեզ հետ։

—Աստուած հեռու տանի, մենք կատարեալ ձորտեր ենք նրանց համար։ վարում ենք, ցանում ենք, փայտ ենք բերում, խոտ և խուրձ ենք քաշում, բոլորը մուֆտա. մի նոքար են բռնում տարէնը 25 կամ 30 բուբլով, բանեցնում են ամբողջ տարի և վերջը շատ ու շատ անելով գուրս են անում, ասում մի կոպէկ վճարելու։ Միթէ դուք ա կանատես չէք և չէք տեսնում մեզ բոլորիս էլ, որ ծանր ու բարակ հարց ու փորձ էք անում։

—Գիտեմ և լաւ եմ ճանաչում, բայց ձեր ազալար և բէկ վէքիլները ամէն տեղ ասում են թէ հայ թաւադները Թուրք ժողովրդին ճընշում են։

—Ոչ, սուտ է և անխիղճ սուտ է. եթէ Թաւադների դէմ էինք, ինչ մեղաւոր էին միւս հայերը, ճանապարհորդները, առևտրականները և մեզ նման գիւղացի հայերը, որոնց անխնայելի կողոպտում էին։ Հապա ինչ էր պատճառը, որ Բօրչալուի Թուրքերը մեզ՝ հայերիս վրա յարձակվեցան յանկարծ և ամէն բան տարն ու վրա արին՝ չէ որ մենք միշտ իրար հետ հաշտ էինք և ասում էինք թէ՝ Բագու, Ղարաբաղ, Նախիջևան, Երևան, Գանձակ և ուրիշ տեղեր ինչ ուզում է լինի, միայն Բօրչալուն չը պէտք է խառնվենք, և մենք էլ ձեզ հաւատալով՝ միում էինք հանդիստ, և եթէ որ ձեզ չը հաւատայինք, առաջուց կարող էինք հեռանալ ձեզանից, մեր ապրանք ու կարողութիւնն էլ տանել ձեր միջից։

—Ի հարկէ կարող էիք, բայց վերջին ժամանակները հեռու տեղերից՝ Բագուից, Գանձակից, Երևանից, Շուշուց և մինչև անգամ Օսմանլուից մարդիկ էին գալիս և մեզ բէզրլիթ մուսուլմաններ էին անուանում և հաւատի կռիւ էին յայտարարում։

Ահա Բօրչալուի Թուրք ժողովրդի, Թուրք մասայի ասածները։ Իսկ Թուրք ազալար պատգամաւորները աշխատում են մեզը Թուրք ժողովրդի վրա ձգել։ Ոչ, պարոններ, մենք ձեզ էլ, ժողովրդին էլ լաւ ենք ճանաչում. Թուրք ժողովուրդը առանց ազալարի, բէկերի և հոգևորականի մի քայլ անգամ չէ անում, թէ լաւ թէ վատ. աչքակապուկ մի խաղաք, էլ ոչ ոքի հեշտութեամբ չէք կարող խաբել. ժամանակն անցաւ, ոչխարի մորթով ծածկված գայլը դամփռներին չէ կարող խաբել։

Յ. Աստուածատրեանց

ՄԱՄՈՒԼ

Փետրվարի 19-ին Պետերբուրգում սկսեց լոյս տեսնել պրոֆէսորներ Մ. Կովալէվսկու և Ի. Իվանիկովի խմբագրութեամբ և շատ նշանաւոր գրողների մասնակցութեամբ «Страна» (Երկիր) մի նոր թերթ, որ արտայայտիչ է հանդիսանալու գեոկրատական լայն բէֆորմերի։ Առաջնորդող յօդուածի մէջ նոր լրագիրը ասում է.

«Մենք դէմ ենք սահմանադիր ժողովին, որ հանկացվում է, իբրև նշանաւոր լիակատար իշխան անցեալի հետ. մենք ցանկանում ենք, որ Թուլատանը միայ միապետութիւն, բայց միայ սահմանադրական և դեմոկրատական միապետութիւն ընդհանուր ընտրողական իրաւունքի հիման վրա։ Մենք պաշտպան ենք պետական միութեան դաղափարին, բայց մի և նոյն ժամանակ ազգութիւնների համահաւասար իրաւունքների դաղափարին, մենք պաշտպան ենք շրջանային լայն ինքնավարութեան, որ որոշ դէպքերում նոյն իսկ տեղական օրէնքներ հրատարակելու իրաւունք ունենայ։ Մենք ակնկալում ենք, որ տեղական շահերի հոգս պաշտպանութիւնը կը սատանէ երկրորդ պալատը, բաղկացած քաղաքների և զեմստվոների ներկայացուցիչներից։ Մենք կարծում ենք, որ ժողովրդական ներկայացուցչութիւնը պէտք է ամենամօտ հերթական հարց դարձնէ գիւղացիների և բանուորների կեանքի բարւոքումը»։

Ուշադրութեան արժանի է պրոֆէսոր Կովալէվսկու «Մաքքիավելիականութիւնը սուսական հողի վրա» յօդուածը։ Առնառակ լրագիրը հաճելի սպասողութիւն է թողնում և, ինչպէս երևում է, ընդդիմադիր ուղղութիւն պէտք է ունենայ։

*

Սկսվել է հրատարակվել նաև մի նոր լրագիր «Բէկն» անունով։ Մոսկվով երկրի վիճակի մասին վերջին երկու ամսվայ ընթացքում, մասնաւորապէս կուսավարչական տէրբորի մասին, որ ամբողջ Ռուսաստանը արիւնով լցրեց, լրագիրը ասում է, թէ տէրբորի սատկութիւնը ճիշտ նշան է, թէ «կուսավարութիւնը կորստեան ծայրին է կանգնած» և իր տարատարութեան ներքոյ ուրիշ ոչ մի այժ չունի, բայց կոպիտ բռնութեան այժը։ Անկասկած, մեծ նշանակութիւն ունի հասարակական տրամադրութեան անկումը, որը և հնարաւոր դարձրեց արիւնահեղ բէպրեսալիաները։ Հասարակական բէակցիան լրագիրը բացատրում է յեսպոխդութեան սիսմներով հոկտեմբերեան դէպքերից յետոյ։

«Փոխանակ, որ անհնարէ առաջ ամրացնեն այն դիրքերը, որոնք այնքան դժուարութեամբ և զոհերով նուաճեց, յեսպոխդութիւնը, ընդհակառակը, ասենց յետ նայելու, առաջ մղվեց։ Այդ յանդուգն ոտիունները երկրի այժեր, բարձր հանդիսացան, և ուղեն ընդհանուր գործագուլի պատճառով արմատական-պէս ցնցված երկիրը համակվեց երկիւղով և հասարակական կարծիքը տատանվեց ու խմրվեց»։

*

Տեղական «Нов. Об.» թերթը փետրվարի 29-ից սկսեց հրատարակվել պ. Նեմիրովիչ-Դանչենկոյի խմբագրութեամբ, որ յայտնի է մեզ մօտ «Նանդ» անունով։ Նոր խմբագրի ուղղութիւնը և հասարակական իդեալների մաքրութիւնը ու անկեղծութիւնը լաւ զգալական են, որ թերթը նրա խմբագրութեամբ ևս կը շարունակէ ծառայել պրոգրէսի գործին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

V

Ամէն մի ցեղի, ժողովրդի մէջ՝ միշտ մի անշնչ փաքրամասնութիւն է, «ընտրեալներ» մի գասակարգ է, որ ներկայացնում է առաջադիմական տարր, որ պայքարում է անցեալի դէմ, ապագայի համար։ Ո՞ւր է այդ տարրը մահմեդական աշխարհում... Այնտեղ հէօլիցիան՝ ասես յանգել է միայն բացասական հետևանքներ... Զարմացութիւն արդեօք... Դարեր շարունակ ներներելուց յետոյ, մեր հարևան Թուրք ժողովուրդը այսօր ահա «սթափման» նշաններ է ցոյց տալիս յանձին իր փաքրաթիւ «գիտակից տարրի», «ինտելիգենցիայի»—և ինչ է պատգրում այդ «ինտելիգենցիան»...

Փորձում է նա—տիեզերական «Նմանողութեան օրէնքով»—փոխ առնել բարձր ազդեցիկ կուլտուրայի նուաճումները։ Փորձում է դէթ մասամբ թօխմվել Բալամի և հարազատ, ինքուր հասարակական բնաշունչ լուծը, ուզում է որդեգրել ինքնաբնադատութեան ու ինքնամարտկման բնորոշուր մեթոդը, որ դրացի հայը վաղուց ի վեր կիրառում է իր կեանքում այնքան բուռն նախանձախնդրութեամբ ու այնքան անդողութեամբ։

Փորձում է նա քայլել համամարդկային ազատագրութեան ճանապարհով, փոքր ինչ մարզուել գաղափարական անձնազոհութեան մեծ դպրոցում, ուր յեսպոխդան հայը 20 տարուց ի վեր վաստակել է մարտիրոսութեան այնքան պատիներ, երբեմն էլ յաղթութեան դափնիներ...

Ո՞չ, նա հանդիսաւոր կերպով, իր մասուլի էկրանում ու փոխքաղաքական պատասում՝ պարտաւանք է ուզում յեսպոխդեան և մերժում է սահմանադրութեան սկզբունքը։ Նա միւս կողմից հրապարակ է նետվում պանիսլամիզմի դրօշակի տակ և այն էլ՝ յարձակողական, թալանող ու յօշոտող պանիսլամիզմի։

Նա զեռնատրած փսվում է Եբլրզրի մեծ մարդասպանի առաջ և առաջացնելով նրա տարբերնա սիրագործութիւնները, պատրաստում է նոր կանութիւն է յայտնում ներշնչելու նրա փայփայած մեթոդից և գործադրելու այն նաև Կովկասում՝ նոյն «ընրոսս» ու տակի հայ գեավորի դէմ...

Եւ փաղիշահական մեթոդը գործադրվում է։ Հէնց այն ժամանակ, երբ հին ըէժիմը փլատակվում է ի դէմս ամենամեծ ու դժնդակ բռնակալութեան, երբ Ռուսաստանի և Կովկասի բոլոր ժողովուրդները, յանձին իրանց առաջադէմ տարրերի, գինված գիտութեան վերջին խօսքով, տոգորված հասարակական նոր իդեալներով, դիմաւորում են իրանց սեփական արիւնով ներկված ազատութեան արշալոյսին—Թուրք «ինտելիգենցիան», իր ժողովրդի գլուխ կանգնած, նրա կեղեքիչ տարրերի՝ բէկերի ու մօլլաների հետ ձեռք ձեռքի առած, հանդիսանում է ըէակցիայի և խուլիգանութեան մի հզօր պատաւար, ապաւինում է հոգևոր ու աշխարհիկ բռնակալութեան... Այդպէս է ահա պատայատվում ինքնատիպ, sui generis հոգեբանութիւնը։ Նոր «սթափվող» ժողովրդի «գիտակից» տարրը որոնում է իր ժողովրդի փրկութեան խարխարը գարձեալ անցեալի ֆէտիշների մէջ, փոխանակ հետեւելու, ընդօրինակելու առաջադէմ ազգերին՝ նա գնում է լուսաւորվելու Եբլրզրի ճիւաղի մօտ... «Նմանողութեան օրէնքը», քաղաքակրթութեան տարածման այդ նշանաւոր ֆիլասը՝ այդպիսով բառսվում է, գլխիվայր դրվում և նրա կրող քրմապետները իրանց հետ միասին՝ նախապատմական բարբարոսութեան անդունդն են գլորում և իրանց հարազատ ժողովրդին...

Կուլտուրայի, թէ ընութեան ժողովուրդ Kulturvolk թէ՞ Naturvolk...

Ինտելիգենցիա չը կայ, անհատներ չէ կան... Թուում է թէ այդտեղ է ամբողջ ժամանակից Իսլամականութեան խորագոյն ցաւը։ Զը կայ այն տարրը, որ այն է բոլոր քաղաքակրթվող հասարակութիւնների, որ կրոնն ու ազգարարն է նոր գաղափարների ու հոսանքների։ չը կայ առհասարակ հասարակական մտքի շերտաւորում, չը կայ այլասնութիւն գաղափարների, մօրալի, աշխարհայեցողութեան մէջ։ Տնտեսական դասակարգային շերտաւորումը կարծես նոյնպէս բիւրեղացել է ցեղի, կրօնի և բոլոր միւս կատեգորիաների նման, նա չէ անդրադառնում մարդկանց մտքերի ու զգացումների վրա.—այն ողբերգական, սև թշուառութիւնը, որի մէջ գտրերով պահում են Թուրք մասսաներին՝ համակրօն ֆէօդարները, կղերական կաստան և աշխարհիկ բռնակալութիւնը՝ ոչինչ չէ ասում Թուրք «կրթված» դասին, նա չէ արտագրում ժողովրդական դատի ճշգրիտ, համոզված առաջնամարտիկներ ու իդեալօղներ. այն արհաւրալի և բնաջնջող պատերազմն անգամ, որ Թուրք տարրի յդացումն է, որ այսօր ներկել է ամբողջ Ռուսկրկվասը և նաև՝ Թուրքի արիւնով, դարձեալ չէ ազդրիս, համոզված առաջնամարտիկներ ու իդեալօղներ։ Ինչպէս Թուրքերը վարվել էին բարարի, Նորաշէնի ու Երևանցոց Թաղի աւերից յետոյ հայերը տարիվա հան միջոցներ ձեռք առնել չարչիների, մօլլա-Չալլեցիների ու քաղաքի միւս մասի Թուրքերի յարձակման դէմ, որոնք բազմաթիւ փորձեր արին հայկական քաղաքամասը ներս խուժելու համար։ Արիւնահեղ ընդհարման հետևանքները եղան Թուրքերի փախուստը Չայլուից ու Մօլլա-Չալլուից ու Թուրքական այդ թաղերի կատարեալ ոչնչացումը իրանց տներով ու այգիներով. ինչպէս Թուրքերը վարվել էին բարարի, Նորաշէնի ու Երևանցոց Թաղի հետ, այնպէս էլ հայերը վարվեցին վերոյիշեալ Թուրքական թաղերի հետ։ Չայլուն ու Մօլլա-Չալլուն, որտեղ կային հարիւրաւոր զինված Թուրքեր, մի օր հոգիս կարողացան ընդդիմադրել հայ ռազմիկներին։ Այդպիսով՝ ինչպէս առաջին քաղաքամասը մաքրվեց հայերից, նոյնպէս երկրորդը մաքրվեց Թուրքերից և գարաւոր հարամները իրարից բաժանվեցին խսպա. Թուրքերն ամբողջովին ժողովվեցին քաղաքի առաջին մասում, հայերը երկրորդ Առաջին քաղաքամասում հայերը անհամեմատ աւելի շարժական ու անշարժ գոյք թողեցին, քան Թուրքերը երկրորդ մասում։ Վայրագ-արիւնահեղ ընդհարումները դժոխային կացութիւն ստեղծեցին թէ Թուրքերի և թէ ևս աւելի հայերի համար։ ամենից շատ այդ դաժան կացութեան ծանրութիւնը զգում են նրանք, որոնք անմիջապէս ՁԼուսվել են դէպքերից, ունեցել են հարիւրաւոր ու բարյական կորուստներ, տաւել են զոհեր։ Այդպէս ապրել անհնարին է, անտանելի է, մանաւանդ նրանց համար, որոնք սովոր են հալալ աշխատանքով, արդար կան, սև թշուառութիւնը, որի մէջ գտրերով պահում են Թուրք մասսաներին՝ համակրօն ֆէօդարները, կղերական կաստան և աշխարհիկ բռնակալութիւնը՝ ոչինչ չէ ասում Թուրք «կրթված» դասին, նա չէ արտագրում ժողովրդական դատի ճշգրիտ, համոզված առաջնամարտիկներ ու իդեալօղներ. այն արհաւրալի և բնաջնջող պատերազմն անգամ, որ Թուրք տարրի յդացումն է, որ այսօր ներկել է ամբողջ Ռուսկրկվասը և նաև՝ Թուրքի արիւնով,—այդ եղակի ճգնաժամն անգամ հանդէս չէ բերում Թուրք ժողովրդի մէջից գէթ մի փաքրաթիւ բանակ՝ կարող, ապդեցիկ ու գաղափարական անհատների, որոնք դիտակցելով ընդհարումի բոլոր դժոխային սմսմաթիւնն ու սարսափները, աշխատէին, ուժգին, որոնուն բոլորով, եռանդուն քարոզներով կանգնեցնել հարազատ ամբոխի կոյր, տարերային սլացքը[1]։

[1]) Կը մեղադրեն մեզ արդեօք, թէ շատ ենք խաղացնում գոյները։ Բայց մի՞թէ որ և է մէկը կարող է պնդել, թէ այդ բանը կայ, թէ նա գործում է պատշաճ լրջութեամբ ու հեղինակութեամբ, թէ միայն մենք ենք, որ ուռճնում ենք նրա գոյութիւնը... Մի՞թէ կը պահանջէք ողորմել այն հանգամանքով որ հրապարակի վրա կայ նորբերս կարմակերպված «Մէկայէ Միլլէթ» (Թուրք սամվարական կուսակցութիւն) կոչվող մի մարմին, որ կան Թուրք օսմլու-էֆենդիներ ու ֆեդաիներ։ Մենք ողջունում ենք այդ տարրերի երևան գալը, քանի որ, այսպէս թէ այնպէս, նրանք Թուրք ժողովրդի ապագան են ներկայացնում. բայց զարգացման խանձարուրի մէջ գտնվող այդ այժերը այնքան անոյժ ու անկայուն են, որ նրանց ձայնը, եթէ անգամ հնչէ խրոխտ ու ազնիւ, պիտի մարէ հայերի խուլիգանութեան յարուցած փոսրի մէջ։ «Եթէ միայն հնչէ խրոխտ ու ազնիւ»... Այստեղ են անխուսափելի բեկերվ։ «Յառաջ»-ի 15-րդ համարում կարդում ենք մի քաղուած Բաղուի մասնմեղական իբր օսլիալ-դէմոկրատ «Իրշաթ»-ից, ուր Թուրք հրապարակագրը հոչակում է «Իսլամութեան մէջ եղող Թուրքական ազգութիւնը, նրա մարդը բնաւորութիւնը» և կատարելեանք շանթեր է թափում «Գեհենի զաւակ հայերի» ու «Դաշնակցութեան» վրա, որոնք յանդգնում են «ամբաստանել, պատասխանատու դարձնել Գանձակի մուսուլմաններին»... Մեկնաբանիչները աւելորդ են։ Իսկական, ազնիւ Թուրք գործիչին հարկաւոր է ներկայ հանգամանքներում, քաղաքացիական բանականաչափ արիութիւն՝ հրապարակով ընդհանրապէս Թուրք ազգերի՝ ընդհանրապէս Թուրք ազգերի՝ ընդհանրապէս Թուրք ազգերի՝

նների խօսքին հաւատալով՝ նրանց նուագած պրնդով պարեց...

Այժմ, ո՞ քրիստոնեք. եկէք ձեզ մի խէլօք խօսք ասեմ. ձեր դարդի գարմանը՝ մեզ, մահմեդականներիս, մօտ չէ. մտածեցէք, տեսէք ո՞ւրտեղ կարող էք գտնել ձեր դարդի դարմանը։ Միայն մեզ հանդիպա թողէք և մեզ էլ ազատեցէք ձեր դժբաղդութիւնից... Այս կրակը օսմանեան հողից ձեր Խաղուրօվները (?) Խոջաեվներները քաշելով Ռուսաստան բերին և այստեղ, սիրվեցին՝ իրանց բերանի թոյնը մեր վրա թափել աշխատեցին. սակայն ջանացէք որ նրանց ոտքերը Պարսկաստան էլ չը կոխեն, որովհետև նրանք այդ բանից ձեռք չը պիտի քաշեն և ձեզ պիտի դժբաղդացնեն։

Մահմեդական պատգամաւորներից մէկը՝ աւելի քաղաքավարի ձևերի ու դարձուածքների տակ կրկնելով համաժողովում այս յօդուածի գլխաւոր մտքերը, այսինքն, որ մենք Անգլիայից զրկված ձգտել ենք անկախութեան Թիւրքիայում, յետոյ Ռուսաստանում, աշխատեց հաւատացնել, որ դա թուրք ռամիկ ժողովուրդի կարծիքն է, մի կարծիք սակայն, որ չէ բաժանում մահմեդական ինտելիգենցիան։

Այս յօդուածը դժբաղդաբար թէ բարեբաղդաբար աւելի քան պերճախօս ապացոյց է, որ այս յիմարութիւնները ըղձում են ոչ թէ ժողովրդի ուղղից, այլ հէնց թուրք մտաւորականից, մահմեդական ինտելիգենցիայից, որը յաւակնութիւն ունի թուրք ազգ, ասնչված մասային առաջնորդելու զէպի ճշմարտութիւն ու արդարութիւն։

Բայց ենթադրենք մի բոպէ, որ այդ ցնորքները բողոքել են իսկապէս թուրք ամբոխի միամիտ ուղեղի բորբոքումներից։ Ի՞նչով է բարձր «Իրաղը» ռամիկի հասկացողութիւնից, երբ նա հիւրընկալում և տարածում է այս կարգի թունաւոր զառանցանքներ։

Այժմ, պարոններ, մի զարմանք, մի զայրանք երբ ձեզ ասեն, որ դուք չէք մահմեդական ժողովրդի իսկական բարեկամներն ու նրա շահերի ներկայացուցիչները...

Տ. Զաւէն

ԱԽԱԼՑԽԱՅԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

(Նամակ Ախալցխայից)

Փետրվարի 16-ին

Վերջապէս երկար սպասելուց և ամբողջ ամիսներ անտեղի վիճաբանութիւնների պատճառով ձգձգելուց յետոյ այս օրերս հարիւր կարելի եղաւ մեր երկսեռ ուսումնարանները բացված յայտարարել և ուսումը սկսել։

Երկու ուսումնարաններումն էլ այս տարի բացված են միայն ա. ը. և գ. պատրաստականներ։ Մաների թիւը շատ լինելու պատճառով, իւրաքանչիւր պատրաստական ունի մի քանի զուգընթաց բաժանմունքներ։ Այսպէս օրիորդաց ուսումնարանը ունի 9 դասարաններ, որոնցից 6-ը առաջին կամ փոքր պատրաստականներ են, 2-ը երկրորդ և 1-ը երրորդ պատրաստականներ։ Տղայոց Կարապետեան ուսումնարանում կան 8 դասարաններ, որոնցից 5-ը առաջին, 2-ը միջին կամ երկրորդ և 1-ը բարձր կամ երրորդ պատրաստական են։ Զը նայելով, որ 900-ի չափ սաներ խնդիր էին ներկայացրել, սակայն ուսումնարաններում տեղ չը լինելու պատճառով զրանց մի մասին անկարելի եղաւ ընդունել։

Կիրակի, փետրվարի 5-ին, Կարապետեան ուսումնարանի դահլիճում մեծ շուքով կատարվեց նոյն ուսումնարանի բացման հանդէսը։ Դահլիճը և ուսումնարանի մուտքը զարդարված էին ոսկի ծռի տերևներով և ճիւղերով, կարմիրներով և պատկերներով։ Դահլիճի մէջտեղում դրված էին Վեհ. Հայրիկի, Կարապետ արքեպիսկոպոսի և ուրիշների պատկերներ։ Հանդիսին ներկայ էին խուռն, անհամար երկսեռ բազմութիւն, այնպէս որ շատերը տեղ չը լինելու պատճառով դուրսը մնացին։

Այդ օրը և Փրկիչ եկեղեցում պատարագից յետոյ, կատարվեց հոգեհանգստեան մաղթանք թուրք-հայկական կոտորածներին զոհ գնացածների համար, որի առիթով խօսեց մեր փոխանորդ Սիօն վարդապետը։ Ժամերգութիւնից յետոյ հոգևորականութիւնը զգեստաւորված խաչով խաչվառով, և պատշաճաւոր շարակնով դիմեցին դէպի Կարապետեան ուսումնարանը։ Այստեղ հոգևորականութիւնը նախ կատարից ուսումնարանի օրհնութեան մաղթանքը և ապա սկսից հանդէսը։ Հանդէսը բացվեց քառաձայն երկսեռ խմբի երգած «Մեր հայրենիք» և «Վեցց Տէր» երգերով, խմբագիր Պօղոս Տէր-Կարապետեանի դեկավարութեամբ։ Ապա բեմ բարձրանալով խօսեցին նախ՝ հայր փոխանորդը և գ. Յովսէփ Թադէոսեանը։

Գ. Թադէոսեանի խօսածներից երևաց, որ ուսումնարանի ուսուցչական խումբը բաւական մեծ ջանքեր է յանձն առել սաների առաջադիմութեան համար։ Օրինակ, սաներին բարոյապէս կրթելու համար, բացի սովորական դասերից, յաճախ կազմվելու են աշակերտական երեկոյթներ, զրուցներ, մարմնամարզութիւններ, զուարճալի խաղեր և այլ կրթական զբաղմունքներ։ Իսկ ժողովրդի համար կազմվելու են կիրակնօրեայ դասախօսութիւններ և երեկոյթներ։ Կարապետեան ուսումնարանի աշակերտների թիւը այժմ 390 է. թէև կան ուրիշ շատ խնդիր ներկայացողներ, սակայն տեղ չը լինելու պատճառով անկարելի է ընդունել այս տարի։ Ուսումնական վարչութիւնը մտադիր է հասակաւոր ազատների համար էլ այս տարի բաց անել աւելի բարձր դասարան, որի համար արդէն դիմել են հոգևոր իշխանութեան՝ թոյլատրութիւն ստանալու։

Գ. Թադէոսեանից յետոյ խօսեց վաստակաւոր կիրակի ուսումնարանի ուսուցիչ Պապովիանը ուսումնարանի վերաբացման առիթով։ Թէ Թադէոսեանի և թէ Պապովիանի խօսածները ժողովուրդը մեծ բաւականութիւնով ընդունեց և «կեցցէ»-ներով ու ծափահարութեամբ իր գոհունակութիւնը յայտնեց։

Նոյն օրը երեկոյան, ժամը 5-ին, աշակերտների համար կազմված էր երեկոյթ, որտեղ եղան երգեր, խօսեցին ոստանաւորներ և մոզական լապտերով պատկերներ ցոյց տուին։ Մոռացայ յիշել, որ ինչպէս գ. Թադէոսեանը ակնարկեց, ուսուցիչների և վարչութեան մէկ ձգտումն է ուսումնարանը դէպ պահել սմմիտ և ինքնակար կուսակցականութիւններից և ծառայեցնել միմիայն կրթութեան գործին։

Վերջացնելով համախ, պարտք եմ համարում յիշել մի տխուր երևոյթի մասին, որը գլխաւոր պատճառ եղաւ մեր ուսումնարանների բացման այսքան ուշանալուն, մի բան, որ մեր ժողովրդեան արդար զայրոյթն է յարուցանում։ Այդ մասին վերջին երկարաւոր գործադուլների պատճառով անկարող եղանք հաղորդել «Մշակի»-ի ընթերցողներին։

Ինչպէս լրագիրներում յայտարարված էր և իր ժամանակին մենք էլ գրել էինք «Մշակ»-ին, մեր ուսումնարանների հոգաբարձութիւնը, վիճ. փոխանորդ Սիօն վարդապետի նախագահութեամբ կազմած իր առաջին ժողովում, ի միջի այլոց որոշել էր հրաւիրել ուսումնարանների համար մի հատ համալսարանական տեսուչ և ընտրել հմուտ ու արժանաւոր ուսուցիչներ։ Սկզբում այդպէս էլ եղաւ։ Հոգաբարձութիւնը հրաւիրեց համալսարանական գ. Յովսէփ Թադէոսեանին տարեկան 1200 ր. ռոճիկով, որը գալով տեղս, սկսեց նախապատրաստութիւններ տեսնել ուսուցչական խումբ կազմելու։ Սակայն մի քանի օրից յետոյ լուր տարածվեց, որ հոգաբարձութիւնը երկու ուսումնարանները բաժանելու է և օրիորդաց ուսումնարանի համար ընտրելու է առաջ ուսուցիչ գ. Յակ. Մուրադեանին (Ներսիսեան դպրոցասիրտ)։ Հոգաբարձական այս վճիռը մեզ հիասթափեցրեց։ Թէ ինչ վիճաբանութիւններ և տխուր հանդամանքներ առաջացան հոգաբարձական այս անտեղի և ապօրինի վարմունքի պատճառով, մենք չենք ուզում հրապարակ հանել, քանի որ ընդհանրութեան գործի օգուտը մեր սրտին աւելի մօտ ենք ընդունում, քան անձնական մենչան խնդիրներ, ուստի լռում ենք, սպասելով՝ որ գործի ընթացքը հետզհետէ ցոյց տայ արդարութիւնը և կիրառա արարքները։ Միայն այսքանը կասենք, որ մեզարոը միանգամայն հոգաբարձութիւնն էր... Այժմ մեր ուսումնարանները փոխանակ մէկի ունեն երկու աւագ-ուսուցիչ. ադայոցը գ. Յ. Թադէոսեանն է 1200 ր. ռոճիկով, իսկ աղջիկներց գ. Յ. Մուրադեան, տարեկան 800 ր. ռոճիկով։ Ժողովուրդի մեծամասնութիւնը թէ բանաւոր և թէ գրաւոր բողոքեց հոգաբարձութեան այդ անտեղի վարմունքի, ապօրինի ծախսերը տեսնելու դէմ, սակայն անհնարանք անցաւ։ Մենք մեմանգամայն դէմ չենք գ. Մուրադեանի աւագ-ուսուցչութեան. մենք նոյն իսկ կասենք հրապարակով որ գ. Մուրադեանը շատ արժանաւորութիւններ ունի ուսուցչութեան ասպարէզում, սակայն ով էր հակառակողը, եթէ մեր հոգաբարձութիւնը պէտք չը պրշէր մէկ տեսուչ ունենալ, այն էլ համալսարանական։ Եթէ մտադիր էին գ. Մուրադեանին ընտրել, հէնց սկզբից թող ընտրէին և ամէն բան խաղաղութեամբ կը վերջանար և մեր խեղճ ու չարաբաստ ուսումնարանները վաղուց բացված կը լինէին։ Հոգաբարձութեան այս տեսակ վարմունքին էր, որ մեր ժողովուրդը այս արիւնոտ օրերում, փոխանակ միմեանց սիրելու, զբաղված էր կուսակցական խանդութիւններով։ Հոգաբարձական այս դատապարտելի վարմունքին էր, որ գ. Յակ. Յակոբեան հրաժարվից հոգաբարձութիւնից։ Իսկ հայր փոխանորդ Սիօն վարդապետը արդէն վաղուց հրաժարվել էր հոգաբարձական ժողովի նախագահութիւնից։ Բացի դրանից այդ խողոմութեան հետևանքն էր, որ մեր ուսումնարանի ուսուցչութիւնից զրկվեցին մի քանի ազնիւ երիտասարդներ, որոնց նման հմուտ ուսուցիչ շատ քչերը ունենք ուսուցչական կազմի մէջ։ Ահա թէ ինչ գրութեան հասցրին ուսումնարան հարցը մեր խնամակալներ և օրէնսդիր հոգաբարձուները։

Ա. Ղ.

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Փետրվարի 27-ին

Մեր քաղաքագլուխը դեռ ևս մի տարի առաջ յայտարարել էր հրապարակաւ իր պաշտօնը թողնելու մասին. այսօր էլ պէտք կանգնել է իր որոշման վրա։ Խորհուրդը դիմեց նրան վերընտրելու համար, միայն նա չը համաձայնեց։ Կային այնպիսի թերահաւատներ, որ նրա հրաժարվելն ընդունում էին ոչ անկեղծ։ Ներկայ խորհուրդի ցանկութիւնն է ուենենալ իր հասարակական գործունէութեամբ յայտնի համալսարանական այդ պաշտօնի համար։ Դիմում արին գ. Խատիսեանին, նա մերժեց։ Խորհուրդի այդ ցանկութիւնը գնեցցիկ է և գովելի, բայց դժուար իրագործելի։ Արդէն փորձը ցոյց տուեց մեզ, որ համեստ առճիկով մեր ցանկացածը ձեռք չի բերեր։ Մնում է մտածել տեղական եղած ոյժերից օգտվելը։

Ներկայումս տեղիս գործող համալսարանների թիւը երեք է։ Նրանք զբաղված են իրանց մասնագիտութեամբ, ապա պրակտիկայով միմիայն։ Նրանցից ոչ ոք չէ համաձայնվի ստանձնել այդ պաշտօնը, քանի որ ունի իր ազատ գործը, որով կլիէնտներ ունի թիւ, որով վարձատրված է և բարոյապէս և նիւթապէս։ Քանզի արդէն հիմնաւոր շինածը, սկսել նորի հիմքը դնել, ոչ մի խելօք մարդ չէ անի, ուր մնաց մասնագէտ համալսարանականը։ Գուցէ թէ համաձայնող ևս գտնվի, հարց է, թէ կարող է իրաւասուների ցանկութեան համապատասխանել։ Վերցնենք մի օրինակ.—վեց տարուց աւելի է, որ անդամ գործում է պ. բժ. Տէր-Սահակեանը։ Լուրջ ու եռանդուն գործունէութեամբ նա գրաված ունի կլիէնտների մի տուար բազմութիւն, ուսուցիչ է ռեալական դպրոցում և մի քանի հասատատութիւնների մէջ այլ և այլ պաշտօն է վարում, որով ունի նիւթական ապահով վիճակ։ Միթէ կը համաձայնի իր ազատ պարապմունքը, նիւթապէս աւելի ապահով վիճակը, իր սիրելի մասնագիտութիւնը թողնել և ստանձնել այնպիսի պաշտօն, որ պէտք է կղզիանայ միմիայն քաղաքային գործերի շրջանում։ Պայմանաժամը լրանալուց յետոյ եթէ չը վերընտրվեց, ինչ կը լինի նրա վիճակը։ Նա իր մասնագիտութեամբ և այլ հասարակական գործունէութեամբ աւելի և աւելի օգտակար է։

Տեղական ոյժերի մէջ կան և ինքնակրթութեամբ զարգացածներ, որոնք աւելի յարմարութիւն ունեն այդ պաշտօնին։ Բարւոք արած կը լինի խորհուրդը եթէ շրջանկատ լինի և որոնել ոչ միայն համալսարանական, այլ մի յարմարաւոր, փորձառու, բարեխիղճ, ազնիւ, քաղաքի շահերին անկեղծ պաշտպան ու քաղաքային գործերը զեկավարելու ընդունակ անձնաւորութիւն։

Բաղաքի շահերը մեր սրտին շատ մօտ լինելով, հարկ ենք համարում յիշեցնել պ. պ. իրաւասուներին, որ աշխատեն շուտափոյթ ընտրութիւն կատարել, ապա թէ ոչ՝ օրից օր ձգելը վտանգ է ապառնում։ Գիտէք, պարոններ, մեր քաղաքն այժմ համարեա թէ վարչական մարմին չունի, որովհետև անդամի մէկին պէտք է անպայման փոխել, իսկ միւսը լինելով բարի և թոյլ բնաւորութեան տէր, քանի որ բացակայում է պ. Տէր-Պետրոսեանի պէս աշալուրջ քաղաքագլուխը, մեամ է ասպարէզը զրպիրներին։ Ընտրեցէք, այո, ընտրեցէք։ Մեր կողմից առաջարկում ենք որպէս թեկնածու՝ իրաւասու պ. պ. Իսահակեանցին, որ տեղիս եռանդուն ու անկեղծ գործողներից մէկն է։ Պարոնը շատ յարմարութիւն ունի իր երկարամեայ փորձառութեան հետ, միայն պակասում է նրան համալսարանական դիպլոմը։

Տեղացի

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Փետրվարի 26-ին

Փետրվարի 9-ին տեղիս վանականական կլուբում տեղի ունեցաւ, եթէ թոյլ կը տրվի մեզ այսպէս ասելու, այստեղի հայ-կաթոլիկ հասարակութեան հայկական երեկոյթը, որի եկամուտը յատկացված էր նոյն հասարակութեան ծխական դպրոցի օգտին։ Իսկապէս ներողութիւն եմ խնդրում «Մշակի» ընթերցողներից, որ այսքան ուշ եմ յայտնում այնպիսի մի մեծարգան երևոյթի մասին, որպիսին էր յիշեալ երեկոյթը։ Մեծարգան եմ համարում երեկոյթը զբաղաւորապէս նրա համար, որ ընդհանուր առմամբ ես անձամբ հակառակ եմ տեսնել մի զրաքաքութիւնից յետոյ շարունակ և տեղական սուգ պահելուն մինչև որ մի ուրիշը վրա կը հասնի։ Ժողովրդի մեծութիւնը միայն նրան պատասխան գծրաքաքութեան զէպքում ուժեղ և տեղական կսկծանք արտայայտելու մէջ չը պէտք է որոնել, այլ և նրա տեղունութեան մէջ։

Ինչպէս ասացինք, թէև երեկոյթը կրում էր, այսինքն անուանված էր «Ընտանեկան երեկոյթ», բայց իր ուրախ և համեստ ընթացքով կարող էր մրցել «ընդհանուր» բնաւորութիւն կրող երեկոյթների հետ։ Այս ասելով, ի հարկ է, մենք չենք ուրանում, որ քնոտական խիստ աչքով չենք նայում նրա վրա, որը և չի էլ կարելի ասել մի «ընտանեկան» երեկոյթի վերաբերմամբ, բայց մի բան, որ անուրանալի է և որ անկասկած կը խոստովանէր նաև ամէն մի կուսակրոնաց աւելի բարձր հասարակութեան պատկանող անհատ, այդ այն էր, որ յիշեալ երեկոյթը տեսնողը կը խոստովանէր, որ հայ տարրը կարող է քաղաքակրթական ամէն մասում պատուաւոր տեղ գրաւել իր բնածին ձիրքով և ընդունակ թեմբ, մասնաւոր և նրա համար, որ այդ բոլորը արտայայտելու հետ միասին միշտ աչքի է ընկնում նաև նրա պարզութիւնը և համեստութիւնը...

Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու միայն այսքանը կասենք, որ երեկոյթը անցաւ շատ ուրախ և տեսց մինչև միւս օր առաւօտեան ժամի 8-ը, իսկ եկամուտի կողմից, ինչպէս լսեցինք, զուտ արդիւնք է մնացել մօտ 500—600 ռուբլի, որի համար և ամէն կերպ արժանի են շնորհակալութեան երեկոյթը կազմակերպող և մասնակցող անձինք։

Թէև ամաչում եմ ասելու, բայց և այնպէս չեմ կարող չը յայտնել զարմանքս այն տարօրինակ շշուկի մասին, որ լսվում է այստեղ, որ երբ թէ հայ-լուսաւորչական հասարակութիւնից եղել են անձինք, որոնք մի տեսակ անյաջ աչքով են նայել երեկոյթի վրա՝ «հայ-կաթոլիկների երեկոյթ» անուն կրելու պատճառով, չը նայելով, որ թէ մասնակցողները և թէ ներկայ եղող հասարակութիւնը կազմված էր առանց խորութեան երկու հասարակութիւնից ևս։ Ո՞ւրքան անգուրեկան և ո՞ւրքան ցաւալի բաներ...

Արդիօք չը՞ պէտք է վերջ դրվեն այդ խայտառակ և անբնական ընբռնողութիւններին, որոնք գործունէութեան, կեանքի մէջ բոլորովին գոյութիւն չունեն...

Գ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նիւ-Եօրկ (Ամերիկայից), փետր. 8-ին (ն. տ.)

Յունվարի 7-ին, Նիւ-Եօրկում յանկարծամահ եղաւ թիֆլիսեցի Գէորգ Եարալեանց 60 տարեկան մօտ, որ քանի՞նից տարիներէ ի վեր իր կնոջ հետ ապրում էր այստեղ 5 կամ 6 տարիից յետոյ նրը կինը մահանում է, Գ. Եարալեանցը թողնում է իր գինու մագազինը և բոլորովին կզրկացած հայերից պարում է հաշարանպատուութիւնից։ Դրա համար էլ ոչ ոք չը գիտէ նրա ազգականների ու բարեկամների տեղը և հասցէն։ Ճաշարանի թղթերը և նամակները քննելուց էլ ոչ մի հասցէ դուրս չեկաւ. միայն մի քանի մարդիկ ասում են, որ նա եղբորորդիներ և քոյրեր ունի Թիֆլիսում։

Հանդուցեալը պատկանում էր «Ֆրէ-Մէսի կամ Մասոն» կոչված ընկերութեանը, որոնք պատուաւոր կերպով թաղեցին նրան։ Իր կեանքը ապահովագրված է 1000 ռուբլի ոսկիով։ Ասում են, թէ անշարժ կալուածքներ, որ գտնվում են Մասոնների հոգաբարձութեան տակ, մինչև ազգականները յայտնվելը։ Հասցէի մասին դիմել «Մշակի» խմբագրութեանը։

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Բաղուի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ մարտի 1-ից փակվել է Բաղուի արհեստաւորաց դպրոցը։

Թիֆլիսի ոստիկանապետը հետաքրքիր զեկուցումն է տուել. «Տեղեկութիւն ստանալով, որ Թիֆլիսի Ազօվօ-Դոնսկի բանկի արտէլչիկ Իվան Կօրնիլովին կողոպտող չարագործները թաղված էին Բօրչալուի գաւառի հայ Գերգեր գիւղի մէջ, ես այնտեղ ուղարկեցի իմ իրաւասութեան յանձնված ոստիկանութեան թաղապետներից մէկին, որը գալով յիշեալ գիւղը, տեղական ոստիկանական պահակների օգնութեամբ խուզարկեցին այդ գիւղի Մկրտիչ Աւետովի, Աւետիք Զաքլէվի և Մինաս Թալաշէվի տները, որտեղ իմ ասացած տեղեկութիւնների հիման վրա պահվում էին կողոպտման մէջ կասկածվող Սէմեոն Բեգուլովը և Լէվան Աւետովը՝ Մաղազաքանց ազգականներով։ Յիշեալ թաղապետը կալանաւորելով նրանց, բերեց Թիֆլիս։ Խուզարկութեան ժամանակ Աւետովի տանը գտնված են բրաունինգ ձեւի մի տարճանակ, բէրդանի հրացան և 30 լի փամփուշտներ, 65 հատ զատարկ դիլդիներ, ալեքձէ գնդակներ և կոտորակներ, իսկ Զաքլէվի բնակարանում Բեգուլովի իրեղէնների մէջ 110 բերդանի պատրաստի փամփուշտների, որ Սագինովը ինքը յանձնել է Զալալ-օղլու պանակատան ուրեանիկին պահելու համար։ Թիֆլիս բերված Լէվան Աւետովը իրան մեղաւոր չը ճանաչելով Ազօվօ-Դոնսկի բանկի արտէլչիկին կողոպտելուն մէջ, յայտնեց, թէև ինքը չէ մասնակցել այդ կատարված կողոպտման, բայց ճանաչում է և կարող է մատնացոյց անել յանցաւորներին, մի և նոյն ժամանակ բացատրեց, որ այդ յանցագործութեան օրը նա պատահել է կողոպտողներից մէկին՝ Աւետին, որի ազգանունը թէև չէ իմանում, բայց գիտէ որ Եարտա հիւրանոցում բուֆետ է պահում. վերջինս տալով նրան մի կապոց թղթադրամ, հրամայեց իսկոյն գնալ Թիֆլիսից հայրենիք, Բօրչալուի գաւառը և չը մտնել իրան։ Իրականութեանը, ուստի նա կողոպտման մասնակցողների մէջի հետ՝ Բէգուլէվի հետ, ճանապարհվեց իսկոյն հայրենիք։ Դրա յայտարարութեան հիման վրա ես առաջարկեցի 3-րդ քաղաքամասի պրիսաւին խուզարկել Եարտա հիւրանոցի բուֆէտը գտնող՝ ախալցխացի Գէորգ Նիկիտիչ Զալալովի բնակարանը, որտեղ, անկողնու վրա և բարձի տակ գտնված են անցագրերի բլոկ։ Բօրչալուի գաւառի Տրիալէթի գիւղական հասարակութեան պետական կնիքով դրոշմած, առանց պաշտօնեաների ստորագրութեան և 5 ամեայ անցագրեր՝ Թիֆլիսի մեշչանսկի ուղղավայի կնիքով, և այլն, Թիֆլիսի մեշչանսկի ուսուցչի կնիքով, բայց առանց վերջինիներիս ստորագրութեան. նոյն զրքույկում գտնված է մի գրութիւն, որ գրված է մատեամով և ունէր հետևեալ բովանդակութիւնը. «Թիֆլիսի մեշչանսկի ուղղավայից, 1905 թ. յունվարի 20-ին Իվան Իվանովիչ Գէորգովին 2. Թիֆլիսի քաղաքացի, 27 տարեկան, 4. Հայ-Լուսաւորչական, 6 ամսրի», որը, ինչպէս պէտք է ենթադրել, պատրաստված է լրացնելու այդ գրքույկը։ Արդէսում գտնված են, ի միջի այլոց, մաուզէր տարճանակի փամփուշտակալ և ոսկէ 5-ռուբլիանոցների կապապար, 1000 բուբլու քանակութեամբ։ Այս գործի ամբողջ գրութիւնը հանդերձ քննութիւններով և Աւետիսեանին՝ ես յանձնել եմ Թիֆլիսի 2-րդ հաշտարար բաժնի քննիչին»։

Աղէտեալների օգտին ստացանք՝ 1) Սև քաղաքից—Յովակիմ Զոհրաբեանի դստեր Նրշանագրութեան հանդիսում ժողոված Եփրեմ Յարութիւնեանի միջոցով 17 ր., 2) Սուրբ Խաչից (Սաուրօպոլ. նահ.) Սահակ Գալլանեանի միջոցով 64 ր. 17 կ., 3) Եալտաօրբատից—Գրիգոր Խաչիկեանի միջոցով 153 ր., 4) Եկատերինոդարից—Տիգրան Բաղալեանի միջոցով 40 ր., 5) Կարսից—Մարտիրոս Բոսանջեանի պակի հանդիսում ժողոված—Ա. Տէր-Եսայեանցի միջոցով 20 ր.։

Մեզ հաղորդում են, որ մի խումբ հայ տիկիններ դիմել են գենեռալ-նահանգապետին, որ թոյլ տայ իրանց մարտի 23-ին ժողովարան դանլիճում կազմել ներկայացում, նուագանդէսի բաժնով և վիճակահանով։ Այդ երեկոյթից զուցած զուտ արդիւնքը պիտի յատկացվի Գանձակում հայ-թուրքական ընդհարումների ժամանակ վնասված հայերին։

Գանձակի քաղաքային դուման, որտեղ ձայնատուները բացառապէս մուսուլմաններ են, վարչութեան անդամ էր ընտրել Ալէքսէր-բէկ Բաֆիբէկովին, բայց նահանգական վարչութիւնը այդ ընտրութիւնը չը վաւերացրեց և առաջարկեց նոր ընտրութիւն կատարել։

Բաղուի խուլիգանները վերջին ժամանակներս առանձին եռանդ են ցոյց տալիս իրանց գործունէութեան մէջ։ Օր չէ անցնում որ փողոցով խաղաղ անցնողներին չը ծեծեն, չը վիրաւորեն։ Մօտ ժամանակներս, ինչպէս հաղորդում են թերթերը, այդպիսի մի քանի դէպքեր են եղել. ի միջի այլոց անցեալ շաբաթ օրը քաղաքի ամենաբանուկ փողոցում, Վեռլիկոխնաժեսկի պրօսպեկտի վրա, անգին զբօսնող հասարակութեան առաջ, երկու անյայտ մարդիկ մօտեցան ուսանող Բրկովին և ապտակելով գետին գլորեցին ու սկսեցին վայրենաբար ծեծել։ Բրկովին պաշտպանելու փոխ անողներին խուլիգանները սպառնում էին տարճանակներով։ Յաջորդ օրը, երեկոյան ժամի 7-ին, Նիկոլայէվսկի փողոցում, նոյն ձևով վարվեցին արական գիմնազիայի 1 դասարանի աշակերտ Սակիսովի հետ։ Իսկ որտեղ է, ինչու համար է ոստիկանութիւնը։

Միջազգային պաշտպանութեան յուզմունքների զոհերի համար։ Ինչպէս լսում ենք, Պետերբուրգում ապրող անգլիացիների և ամերիկացիների մի խումբ Հաագայի կօնֆերենցիայում հարց է զարթեցուցած Ռուսաստանում միջազգային կարմիր խաչի ընկերութիւն հիմնելու՝ անկարգութիւնների ժամանակ վնասվածներին օգնութիւն ցոյց տալու նպատակով։ Այդ հարցը յարուցված էր այն պատճառով, որ անցեալ անկարգութիւնների ժամանակ վիրաւորների անգին մեծամասնութիւնը մնում էր առանց որ և է մի օգնութիւն և նոյն իսկ մասնաւոր մարդկանց փորձերը օգնելու վիրաւորներին՝ իշխանութեան կողմից արգելքների էր հանդիպում։

—

«Յնօր. Փուրց.» լրագրին Պետերբուրգից հեռագրում են. «Ինչպէս երևում է Շմիդտին կախաղան չեն բարձրացնի. ծովային օֆիցերների մի խումբ վճռեց դուրս գալ ծառայութիւնից, եթէ Շմիդտը մահվան կը դատապարտվի»։

—

Զինուորական մինիստրութեան կից հատատված առանձին մասնաժողովը, ինչպէս հաղորդում «Բ. Մ.» թերթը, մշակել է նոր կանոնագրութիւն սպաներին կենսաթոշակ տալու համար։ Ներկայ կենսաթոշակը տրվելու է բացառապէս որոշ տարիների ծառայութեան համար՝ սկսած 25 տարուց, հետևեալ հաշուով. 25 տարվայ համար տացած ռոճիկի 60%-ը, 25 տարուց աւելի ծառայութեան համար իւրաքանչիւր տարվան աւելացնում են 2%, այնպէս որ 35 տարվայ ծառայութեան համար տրվում է 80% կենսաթոշակ։ Այժմ լրիւ ռոճիկի կենսաթոշակը վերացվում է։

—

Օչակովից «Русь» թերթին հեռագրում են. Պաշտպան Վիսրերգը ամեն օր տեսակցում է Շմիդտի և մեռ տիրտրվղների հետ, և տեսակցութեան ժամանակամիջոցը չէ սահմանափակված։ Մամեան գատապարտվածները պահվում են առանձին, Շմիդտը առանձին։ Տեսակցութեան ժամանակ միշտ ներկայ է լինում մի սպայ։ Բաղաքում յաճառ լուր է պտտում, որ Շմիդտին և միւսներին ներումն է շնորհված։

—

Մերվ քաղաքի մուսուլմանները հանդգնակել են իրանց մէջ 651 բուբլի յօգուտ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ վնասված կովկասեան մուսուլմանների և ուղարկել են «Հէյտի»-ի խմբագրութեանը։ Խմբագրութիւնը այդ գումարից 400 բուբլի ուղարկել է Շուշի, իսկ 252 բուբլի Գանձակ։

—

Վարշավայից «Вечъ. Го.» թերթին հաղորդում են. «Ռուսական ակումբը պեսիմիստ ներկայացրեց գենեռալ-նահանգապետին, որպէս խնդրում է, որ Վարշավա քաղաքը մի միլիոն բուբլի կենսաբերազին վճարէ ապանված ինժիներ Իվանովի ընտանիքի օգտին»։

—

«Вечъ. Гол.» թերթին հաղորդում են Եկատերինօսլավից. «Զարդ է ապտավում. ասում են, որ լինելու է Զատկի առաջի օրը։ Պաշտպանութեան և նոր հողոցների Մինիստրը թուլկել է բաց թողել, որով հրաւիրում է ընտանիքներին կոտորել ոչ քրիստոնեաներին։ Գաւառից հաղորդում են, որ արդէն ապրանքներ շարժում է սկսվել, ուղարկված են կողանիներ»։

—

Անբերրութիւնից վնասված նահանգներում սարսափելի մեծ չափերով տարածվում է սովի տիպ։ Պլաստարակա մեռնում են մինչև 11 տարեկան երեխաները։ Պետերբուրգի Ընկերութիւնների Միացեալ Կազմակերպութիւնը հրաւիրում է նուիրատուների ուշադրութիւնը այդ դրութեան սարսափելիութեան վրա։ (Ն.)

—

Սահմանադրական-ռամկավար կուսակցութեան «կենտրոնական կոմիտեն մշակել է Պետական Դումայի համար իր թեկնածուագամամուրների նախնական ցուցակը։ Այդ թեկնածուների մեծ մասը կուսակցութեան կենտրոնական կոմիտեի անդամներն են։ Ֆէդորով, Վ. Դ. Նաբոկով, պրոֆէսսոր Պետրաժիցկի, Բոգդէվ, Ի. Վ. Գուսէֆ, պրոֆէս. Կարէյէվ, պրոֆէս. Գրիմմ, Ե. Ի. Կեդրին, պրոֆէս. Լ. Բրանդտ և Լ. Ֆ. Պանտելէյէվ։

—

Պետերբուրգի հոգևոր ճեմարանի մի խումբ ուսանողներ փետրվարի 21-ին մասնաւոր ժողովում որոշեցին ուղարկել Օչակով զինուորական դատարանի դատախազների անունով հեռանկար հեռագիրը. «Ամբողջ քրիստոնէական էսիան և տիեզերական մօրալը դիմված է մի վհոյ սպգանանքի վրա. մերձաւորին սիրելու։ Զինուորական դատարանի վճիռը Օչակովում լեյտենանտ Շմիդտի մասին նոր նախատական դէօշմ է ներկայանում մի երկրի համար, որը մարտնարելու։ Ի՞նչ է ասում Քրիստոսի և նրա ուսմունքը։ Մի խախտեք դատարանների արդարութեան և գթութեան պատիւրանները։ Շմիդտի դատավճռի իրագործումը հատատարաշէր է արդարադատութեան բարոյական և մօրալ կերպով անկման։ Մենք, հոգևոր ճեմարանի ուսանողներս, յանուն Քրիստոսի, որը սիրոյ և սոցիալիզմի հատատատութիւնի վէճն է դրել, կոչ ենք անում դատարանին՝ դիտակից լինել դէպի իր պարտականութիւնը և պատասխանատուութիւնը հայրենիքի առաջ և ասում ենք նրան. «Երկիրը Շմիդտի կողմն է, և իրաւունք ունի նա, արդեօք, արհամարհելու երկրի ձայնը»։ «Русь»։

—

Թուատատանում խռովութիւնների ամիսներին, ինչպէս յայտնի է, շատ անձինք անպէտն կրեցին աւերումներից և հրդեհներից։ Վնասվածները զիմել էին բարձր իշխանութեան՝ վարձատրութիւն պահանջելով իրանց վնասների համար։ Ի պատասխան այդ դիմումների կառավարութիւնը կարգադրել է, որ խռովարարները—համայնքներից ընտրված և կառավարութիւնից նշանակված անձինքների ձեռքով հետաքննեն և լուսաբանեն աւերմունքներից և հրդեհներից ժողովրդին հասցրած վնասների չափը։ Այդ մասնաժողովները արդէն գործում են և հաւաքում են հարկաւոր նիւթեր։ Բայց հատատատ աղբիւրից մենք լսում ենք, որ և կրկին դէմ ապաքինարարական ընկերութիւնները, որոնք համաձայն իրանց կանոնագրութեան, ապատամբութիւնների և խռովութիւնների ժամանակ առաջացած հրդեհների վնասները չեն վճարում իրանց մօտ ապահովագրած անձերի տէրերին, ամենամենայնիւ, իրանց գործակալների միջոցով սկսել են վերոյիշեալ մասնաժողովներից մանգամայն զատ հրդեհից առաջացած վնասները որոշել և լուսաբանել, որպէս զի՝ երբ Գնական Դումն բացվի և սկսէ իր գործունէութիւնը, առանձին առանձին զեկուցագիրներով միջնորդութիւն յարուցանեն Դումայի առաջ վնասների հատուցման, և կամ մի այլ ձևով անմիջ տուժվածներին նիւթական օգնութիւն տալու պատուիրան գանձարանից։

—

Կենսաթոշակ ստացողները, որպէս լրացուցիչ տուրք, պէտք է տերութեանը վճարեն—ով 600—1000 բուբլի է ստանում—1%, ով 1000—5000 բուբլի է ստանում—2%, իսկ ով 5000 ր. և աւելի է ստանում, պէտք է վճարէ 3%։

—

Անցեալ տարվայ

անյայտ է թէ մեր եկեղեցին որքան պատրաստի փող ունի, ուստի ցանկալի էր, որ ժողովում մենք պահանջենք նախ, որ վիճ. կօնսիստորիան մեզ մի հաշիւ ներկայացնէ և ապա ըստ այնմ որոշումներ անենք»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

Լայպցիգ, 13 փետրվարի

Միջազգային լեզուի խնդիրը.

Կեանքի պահանջներից ծնված այս հարցը, որը այնքան մտքեր է զբաղեցնում, բոլորովին նոր չէ. դարեր սուաջ, երբ միջազգային լեզուի կարիքը նոյն իսկ դեռ հասունանալու հող չունէր և առօրեայ հարցերի շարքերը անցնելու պահանջ ծնեցնում էր ժամանակի մտքի իշխանութիւնից դուրս մէջ և եզրակացութիւն, ընդհանրապէս, այն էր լինում, որ լատինէրէնը իբրև միջազգային գիտական լեզու պէտք է ընդունել։ Այս խնդրի յայտնի պաշտպանն էր Լայբնից. Գէօթէն էլ ոգևորվում էր միջազգային գրականութիւն ունենալու իդէալով։

Այս մեծութիւնների ժամանակ, ինչպէս ասացինք, կարիքը այն խատութեան չէր հասել և կենտրի հարաւաս ծնունդը համարել չէր կարելի, ինչպէս այժմ, երբ հարիւր հազարաւոր վերստեր իրարից անջատված ժողովուրդներ իրար մասին աւելի ճիշտ և բազմակողմանի տեղեկութիւններ ունեն, իրար հետ աւելի սերտ են մտնում և քարոզական նպատակ կապված, քան անցեալում երկու սահմանակից ժողովուրդներ. երբ կապիտալիզմի զարգացումը, հաղորդակցութեան անընդհատ աճող դիւրութիւնները և յարաբերութիւնները, միջազգային վաճառականութեան ներկայ ձևի անօրինակ զարգացումը և այլ նման պատճառներ և շարժառիթներ նպաստում են միջազգային լեզու ունենալու խնդրի առաջանալուն։ «Միջազգային լեզուն—ինչպէս բացատրում է 1900 թ. Պարիզում գանազան ազգերին պատկանող անձինքներից կազմված այդ խնդիրը կեանքի մէջ մտցնելու յանձնաժողովը—պէտք է սովորական կեանքի կարիքներին, վաճառականութեան և հաղորդակցութեան նպատակներին, նոյնպէս և գիտութեան պահանջներին բաւականութիւն տալ կարողանայ»։

Միջազգային լեզուի գոյութիւնը չէ մերժում ազգային լեզուների գոյութիւնը և այլապէս էլ լինել չէր կարող, «սիրուհը, գեղեցիկը և բարձրը, որը միայն մեր մայրենի լեզուով ասել և գրել կարող ենք, չը պէտք է ջնջավի. նացիոնալ պօէզիան և գրականութիւնը պէտք է մնան, ինչպէս որ կան», ասում է հռչակաւոր քիմիկոս և բնափիլիսօփայ Օսվալդը միջազգային լեզուի պաշտպանութեանը նուիրված իր «Die Weltsprache» գրքոյկի մէջ։ Եթէ հարցը այդպէս չը դրվէր, եթէ լեզուների պահպանութեան խնդիրը անհրաժեշտութիւն չը նկատվէր և միջազգային լեզուի տարածվելովը ոչնչանալու դատավճիռ պիտի կարդացվէր միւս լեզուների գոյութեանը, այն ժամանակ ընդհանուր լեզու ունենալու հարցը քաղաքացիական այն իրաւունքը չէր տանայ, ինչպէս այժմ է տացել։ Միաբարբառ, միալեզու մարդկութիւն հրաւիրելը մի տաղտուկ ուտօպիա է. օգուտի տեսակէտից նայելով անգամ հիմք չունի այդ ցանկութիւնը, որովհետև դրանով մարգկութեան թշուառութիւնը չի վերացվի և լեզուների տարբերութիւնը չէ, որ ազգերին իրար ձգտելու և իրար դէմ է հանում, դա աւելի տնտեսա-օգիալական և այլ խորունկ պատճառների վրա է խարխլուում։ Մայրենի լեզուն ունի այնպիսի քնքոյշ և կրօնի զգացումի արժատաւորումներ իր մէջ, որի համար նա յաւէտ գոյութիւն պէտք է ունենայ. սակայն այդ զգացումների էութիւնը դրուատել բառերի մէջ անկարելի դժուարութիւն է. դա զգացումների այն տեսակին է պատկանում, որը օբեկտիվացնել, ուրիշներին մատչելի դարձնել անընդունակ է ներկայի մարդը և դեռ շատ հեռու է այն ժամանակները, երբ նա զարգացման այն աստիճանին հասած կը լինի, որ հպարտօրէն ասել կարողանայ՝ «հա այս բառական ֆորմուլների տակն եմ դնում այն զգացումների բացատրութիւնը, որը չէր կարողանում յանդգնել 20-րդ դարու մարդը։ Մարդ արարածը շատ հարուստ է այդպիսի անյայտնելի և միշտ պատկերացումից խուսափող զաղափարներով և զգացումներով։ Ահա կանգնած ենք Բաֆայէլի հնաշարմիկ «Մադոննա» նկարի առաջ և հրաշանում, հիանում ենք, կամ դիտում ենք լեռնային բնութեան վերջալոյսը և կարծես միաւորվում ենք բնութեան հետ, բայց երբ դրանցից ստացած մեր ինդիվիդուէլ զգացումները և տպաւորութիւնները բառերով արտայայտել ենք ուզում, զգում ենք մեր անփառունակ անկատարութիւնը։ Մեր հոգեկան կեանքի մէջ մենք շատ ու շատ դէպքերում զգում ենք և միմիայն զգում։ Լեզուն մի գեղարուեստ և գուցէ գեղարուեստների ամենամեծն է, որ մարդը ստեղծել է կարողացել իր տառապող կեանքի ընթացքում և եթէ վանդալութիւն է գեղարուեստական մի որ և է գործ փչացնել-ոչնչացնելը, աւելի վատթար է այն ձգտումը, որը լեզուներին այլասերում և ոչնչացնում է պատճառում։ Միջազգային լեզուի պաշտպանները հարցը այնպէս դնելով, որով մայրենի լեզուները չեն ջնջվում, աւելի հիմնաւոր հիմքերի վրա են դնում գործը և պրոպագանդայի աջողութիւնը աւելի դիւրին դարձնում։

Այժմ մի էական հարց է ծագում. կենդանի լեզուներից որը պէտք է միջազգային դառնայ և դա կարելի՞ խնդիր է մի նոր լեզու ստեղծել միջազգային դարձնելու նպատակով։ Պատասխանը դանդաղ է, ի հարկէ, բայց Պարիզում կազմված կօմիսիան անսպառակայտմամբ և անկարելի է համարում նոր լեզուներից մէկին ու մէկը միջազգային դարձնելու ձգտիրը, որովհետև դրա աջողութեան անպայմանօրէն խանգարել կը հանդիսանայ միւս ազգերի ինքնասիրութեան զգացումը և որ միջազգային լեզուն այնքան գիւրամատչելի պէտք է լինի, որ սեպհականութիւն ստանայ ամեն մի էլեմենտաս կրթութիւն ստացած մարդու և մանաւանդ Եւրօպայի կուլտուրային պատկանող բոլոր ազգերի և դասակարգերի համար, մի պահանջ, որին բաւականութիւն տալ, համարեա չեն կարող ներկայ եւրոպական լեզուները իրանց դանազան աւելորդաբանութիւններով և քերականութեան մէջ եղող անթիւ բացառութիւններով։

Մնում է նոր լեզու ստեղծելու հարցը, որը մի անմիտ ուտօպիա չէ. այժմ արդէն 10-ից աւելի դանազան անուններով ստեղծված լեզուներ կան և տարածված են քիչ թէ շատ չափերով. ժամանակի փորձերը ուրիշ աջողութեամբ են պսակվել։ Պարիզի կօմիսիայի պրոպագանդի նպատակն է, որ դանազան ազգերի պատկանող գիտնականներից մի կօմիտէ կազմէ, որը քննէ այն հարցը, թէ պէտք է նոր լեզու ստեղծել միջազգային դարձնելու համար, թէ ստեղծվածներից մէկնումէկը ընդհանուր դարձնել։ Այդ վճռից յետոյ ընդունված կամ ստեղծված լեզուն դառնում է դասաւանդելի բոլոր երկիրների դպրոցներում։

Կարելի հարց է, ապագայ ունի, թէ ոչ, գրա մասին չենք խօսում, մեր նպատակն էր տալ այն շարժառիթները, նպատակը և գրան հասնելու միջոցները, որին ձգտում են միջազգային լեզու ունենալու պաշտպանները, որոնց թւում կան, պէտք է ասել, շատ ու շատ յայտնի և ակնառու գիտութեան մարդիկ։

Դ. Էդիլեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴՈՐԾԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՑ

1 մարտ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 փետրվարի։ Մինիստրների կօմիտէյը թոյլատրեց Սիբիրի համաբուհասակից ընկերութիւններին և իւղագործական հասատատութիւններին վերսկսել փոխատուութիւնները և որոշից 1906—7 թ. թ. շաբրի արատանութեան սովորական չափը 70 միլ. պուդ—Մարտի 3-ին Պետերբուրգի նոտանգական դատարանում նշանակված է Դուլիդով և Էյզենշէր ուսանողների գործի քննութիւնը, որ մեղադրվում են 1905 թ. յունվ. 9-ին Վասիլէվսկի կղզում պատնէշներ կառուցանելու մէջ։

ՄՕՍԿՎԱ, 28 փետրվարի։ Հոկտ. 17-ի դաշնակցութեան քաղաքային կօմիտէների ներկայացուցիչների ժողովը որպէս թեկնածուներ մատնացոյց արեց Շիպկօվի և Գուչկովի վրա։ Մարտի 6-ին Մօսկվայում կայանալու է հոկտ. 17-ի դաշնակցութեան Պետերբուրգի և Մօսկվայի կենտրոնական կօմիտէների ժողովը՝ պարզելու համար դաշնակցութեան վերաբերմունքը դէպի փետրվ. 20-ի մանիֆէստը։—Բանւորների ընտրութիւնները նշանակված են քաղաքագլխի նախագահութեամբ մարտի 5-ին Մօսկվայում, իսկ 12-ին նահանգում։

ԽԱՐԿՕՎ, 28 փետրվարի։ Այսօր սեմինարիայի երեք բարձր դասարանները պատրաստեցին քիմիական օբստրուկցիա, ապա դիմեցին ըէկտորի բնակարանը, պահանջեցին ընդունել 23 արձակված աշակերտներին։ Երբ ըէկտորը հրաժարվեց բանակցութիւններ վարել, այն ժամանակ սկսեցին կոտրել կահ-կարասիքը և ծծմբային թթուով սրսկել։ Մի քանի կաթիլ թռան ըէկտորի երեսին և առաջացրին այրվածքներ։ Աչքերը մնացին անվնաս։ Սեմինարիա եկաւ քննիչը, նահանգապետը և թեմական առաջնորդը, իսկ շինութիւնը շրջապատվեց կօզակներով և դրագուններով։

ՊԱՐԻԶ, 1 մարտի։ Կազմվեց նոր կաբինէտ. Սարիէնը՝ նախագահ և արդարադատութեան մինիստր, Կլեմանսօն՝ ներքին գործերի, Բուրժուան՝ արտաքին գործերի, Լեմիէնը՝ զինուորական, Ֆոմսօնը՝ ծովային, Բրիանը՝ լուսաւորութեան, Դումէրը՝ առևտրի, Վարդուն՝ հասարակական աշխատանքների, Բիւօն՝ երկրագործութեան, Գուանկարէն՝ ֆինանսների, Լէյգը՝ գաղթավայրերի։ Ցայսարարութեան մէջ՝ որ պատրաստ կը լինի երեկոյեան, կառավարութիւնը արտաքին քաղաքականութեան առթիւ կը յայտնէ, որ կը հետևէ նախկին կաբինէտի ուղղութեան, կը պահէ ֆրանս-ռուսական գաշինքը, որ այնքան օգտակար է երկու պետութիւններին ևս, անխախտ կը պահէ միւս մի քանի մեծ պետութիւնների հետ կապած բարեկամութիւնը, որին տալիս է շատ մեծ նշանակութիւն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մարտի։ Խաղարկու տոմսերը տարան—200000 ր.—սերիա 5181, № 43, 75 հազար—16353, № 37, 40 հազար՝ 14278/48, 25 հազար՝ 10896/41, 10 հազար՝ 10335/13, 6725/45, 5847/40, 8 հազար՝ 11040/31, 18918/44, 11719/28, 15842/28, 9934/43, 5 հազար՝ 1016/43, 6831/24, 1213/40, 3128/24, 3505/42, 305/2, 4715/12, 15997/2, 1 հազար՝ 3776/32, 14791/12, 8482/23, 7580/45, 2648/49, 12008/16, 19688/49, 4230/6, 12508/10, 6925/4, 12332/27, 18774/34, 6911/15, 2664/1, 16497/3, 665/5, 17416/22, 18470/34, 11818/2, 9391/30։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 փետրվարի։ Պետական խորհուրդը հաստատեցին տուեց արդարադատութեան մինիստրին, որ ապօրինի ամուսնութիւնից ծնված որդին, որի մայրը յայտնի է, կարող է մկրտվել մօր ցանկութեամբ նրա կրօնի ծէսերի համաձայն։ Լրագրերների տեղեկով, ազգային անկարգութիւններից առաջացած վնասները հերօական Ռուսաստանի 20 նահանգներում ներքին գործերի հաշվով անում է 31½ միլ. ռուբլի, իսկ Գօլուբեվի նախագահութեամբ կազմված առանձին խորհուրդը անկարելի գտաւ վճասները հատուցանել 10 միլ. ռուբլիով։

ՐԻՂԱ, 1 մարտի։ Ոստիկանութիւնը գտել է 6 ռումբ, պայթուցիկ նիւթեր, բանկիլ լոր, տարբանակի փամփուշտներ։ Ձերբակալված են 6 հրէաներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մարտի։ Այսօր՝ Յարսկոյէ-Սէլօի պալատում Նորին Մեծութիւնների ներկայութեամբ հոգեհանգիստ կատարվեց Ալէքսանդր II կայսեր համար։ Ցերեկվայ ժամի 12-ին Ազատաբար Կայսրի գերեզմանի վրա հոգեհանգիստ կատարեցին նաև Պետերբուրգի քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչները։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մտադիր է խորհրդակցութիւն կազմել՝ ժողովրդական սկզբնական զարգացման հարցերը քննելու համար։ Մինիստրութեան մէջ ներկայումս մշակված են ընդհանուր ուսուցման նախագծի հիմունքներ և վերանայված է տարրական ուսումնարանների կանոնադրութիւնը։ Մարտի 6-ին, Պետական խորհրդում մտադրվում է քննել հետևեալ գործերը՝ 1) Բրէական կարևոր գործերի կատարման ժամանակամիջոցը կրճատելու, ազնուականների և գիւղացիական բանկերի փոխատուութեան կանոնը փոխելու, թոյլատրել Դոնեան ազնուականութեան գերել բացի հողերից, նաև միւս ազնուականական անշարժ կայքերը կրակից փոխադրած ապահովագրութեան կանոնները և Վօլգայի և Տէրեկի գեսարերանններում ձկնորսութեան օրէնքը փոխելու մասին։ Դատաստանական պալատը մարտի 1-ին քննել է մամուլի վերաբերեալ մի քանի գործեր. «Знаніе» շաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչ Գալաչէվը արդար է ճանաչված, «Зеркало» շաբաթաթերթի խմբագիր Պանկրատիեվը դատապարտված է 6 ամիս բանտարկութեան, հեռագրական կայարանի կառավարիչ Կուրօվսկին Նորին Մեծութեան հայհոյելու համար դատապարտված է 5 ամիս բանտարկութեան։ Առևտրի վարչութիւնը բացատրեց, որ Պետական խորհրդի համար ընտրողները կօմիտէների ձեռքով իրանց առևտրա-արդիւնաբերութեան դասակարգի միջից, ոչ թէ միայն բորսային ընկերութիւնից։

ԱԼԺԷԶԻՐԱՍ, 1 մարտի։ Կօնֆերէնցիայի առաւօտեան նիստը նորից քննեց ստրկութեան կոզզակերպութեան հարցը։ Ոստիկանութեան վերահսկողութեան առթիւ համաձայնութիւն դեռ չէ կայացած։

ԲՈՒԽԱՐԷՍՏ, 1 մարտի (Բիւրօյի թղթ.)։ Մինիստր-նախագահ Թէյլէրովարին պատգամաւորութեան ասաց, որ թագաւորը պահում է սահմանադրութիւնը՝ լիակատար և բարեխիղճ կերպով, բայցսահմանադրութիւնը կարաշնաւորէ իր իրաւունքները, որ կալանից իր ջանքերը գործ է դնում խախտելու ժողովրդի՝ դէպի իր թագաւորը տածած տրադիցիական հաւատարմութիւնը և երկիրը վանդալոր խռովութեան մէջ ձգելու համար։ Թէյլէրովարին բոլոր այժեցով կը մարանէ այդ ինդրդանների դէմ և կը ձգտի իր ամբոխի վրա, մինչև որ սահման կը տրվի ապօրինի կացութեան։ Նա յոյս ունի, որ մասաները կը կանգնեն կառավարութեան կողմը և դէմ կը դնան կօալիցիային։ Կրիվիսը կը վճռվի բացառապէս ընդհանուր ընտրողական իրաւունքի ընդունելով, որովհետև այն պատասխ. որ կընտրվի ընդհանուր ձայնաւորութեամբ՝ անտեղի ընդհարումներ չի առաջացնի և կը զբաղվի ժողովրդի բարեկեցութեան հարցերի վճռելով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մարտի։ Պաշտօնական։ Մինիստրների Խորհուրդը փետրվարի 28-ի նիստում կանգ առաւ այն թերթիկների քննութեան վրա, որոնք ազատ կերպով հրատարակում են բանտերի կօրմգրել հրէաների վրա։ Ընդունելով մի ժողովրդին միւս ժողովրդի դէմ գրգռող թերթիկների վնասակարութիւնը, Խորհուրդը վճռեց՝ հրաւիրել պատշաճաւոր հատատութիւնների ուշադրութիւնը, որ անհրաժեշտ է խիստ վերաբերվել դէպի նման երևոյթները և հարկաւոր դէպքերում մեղաւորներին պատժել։ Ապա քննելով ներքին գործերի մինիստրի Հօմիլի յունվար ամսվայ անկարգութիւնների քննութիւնը, որ կատարվել է այդ քանի համար ուղարկված ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամների ձեռքով, Խորհուրդը կարևոր համարեց զբաղվել գործողութեան քննութեամբ և պատասխանատուութեան ենթարկել այն պաշտօնեաներին, որոնք մեղաւոր կը ճանաչվեն կարևոր միջոցները ձեռք չառնելու մէջ—կատարված բռնութիւնների և անկարգութիւնների առաջն առնելու համար։ Փետրվ. 20-ին տուած ուկազի 15 կէտի համաձայն, Մինիստրների Խորհրդին յանձնարարված է միջոցներ ձեռք առնել, անյապաղ կատարելու Գիտական Խորհրդի անդամների ընտրութիւնները։ Ամփոփելով այդ առթիւ արված ներքին գործերի, առևտրի, ժողովրդական լուսաւորութեան մինիստրների և Սինոդի օբէր-պրօկուրորի ենթադրութիւնները, Խորհուրդը միացաւ վերջիններիս կարծիքներին, որ կարելի է նշանակել—Պետական Խորհրդի անդամների ընտրութիւնների ժամանակամիջոցը—Պետական Դումայի անդամների ընտրութիւններից կանուխ, բայց միայն այն հաշուով, որ ընտրողները արգելքների կը հանդիպին ինչպէս այդ, այնպէս և ուրիշ ընտրութիւններին մասնակցելու դէպքում։—Արդարադատութեան մինիստրը դեկուցեց Մինիստրների Խորհրդին իրա շուտափոյթ կազմած ենթադրութիւնները—ազատութիւն շնորհելու և կանոնաւորելու Պետական Խորհրդի և Դումայի առաջիկայ ընտրութիւնները, և պահանջելու պարտամունքների կանոնաւոր ընթացքը՝ այդ բարձր հաստատութիւնների մէջ։ Մտադրվում է այս նոր կանոններով հետամուտ լինել, դատավարութեան ընդհանուր կարգով, ընտրութիւնների ժամանակ թերու եղող չար գործադրելու դէպքում։ Այս կանոնները Բարձրագոյն հաճութիւնը ստանալուց յետոյ, մտադրվում է անյապաղ քննել Պետական Խորհրդում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 մարտի։ «Русск. Гос.» լրագրում տպված է լրագիրների հաղորդած այն լուրը, որ իբր թէ մտադրվում է վերացնել մինիստրների կօմիտէը։ Այս ստայգ լուրի իբր հիմք կարող էր ծառայել այն հանգամանքը, որ իսկապէս քննվում էր այն հարցը թէ՝ մինիստրների կօմիտէան որ գործերը արդեօք պիտի յանձնվեն ըստ պատկանելոյն Պետական Խորհրդի վարչութեանս։—«Русск. Госуд.» լրագիրը նոյնպէս հերքում է լրագիրների այն տեղեկութիւնը, որ իբր թէ Մինիստրների Խորհրդում քննվում էր՝ Պետական Խորհրդում Ֆինլանդիայի ներկայացուցիչներին ընդունելու հարցը, նոյնպէս յայտնում է, թէ այն լուրը, որ իբր թէ կոմս Վիտտէն անտակարանքով է վերաբերվել պրօֆէսիոնալ ընկերակցութիւնների նոր օրէնքին, որ մշակել է նախկին մինիստր Տէմիրեազվը և որ տալու է մեծ հրաշալորութիւններ բանւորներին՝ կաղմոտալի դէմ կալելու վերաբերմամբ—ճիշտ չէ։ Իսկապէս կոմս Վիտտէն համարանքով է վերաբերվել այդ նախագծին։ Սահմանադիր-ռամկավարական կենտրոնական կօմիտէը վճռեց ակտիւ մասնակցութիւն ունենալ Պետական Խորհրդի ընտրութիւններում, կազ հասատատել ազատամիտ կուսակցութիւնների հետ, ընդունել լէհերի և հրէաների պատգամաւորութեան առաջարկը միահամուռ աշխատելու նախընտրական ընտրութիւնների ժամանակ։

ԲՈՒԽԱՐԷՍՏ, 1 մարտի։ (Բուս. գործ)։ Պալատը ընդունեց Ռուսաստանի հետ կապած առևտրի դաշնագիրը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուկկաս, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից՝
ԱԹԱՒՈՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Յ. Մ. ՋԻՊՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նէարդային։
Մ. Գ. ԱԽԵՏԻՄԵԱՆ—11—12 ժ. մորթու, վներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՄԵԼՅԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԴԶԵԼԻՆՍԿԻ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ղ. Պ. ԴԱՎԱԶՅԱՆԻՑ—1—1½ ժ. ներքին և ներքին հ.
ԳՈՒՆ-ԲՅԵՏՇԵ Ա. Ի. ՇԱՆԵՐԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՒՆՔԸ
Ա. Մ. ՓՈՒՌԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկաստ.։
Ե. Դ. ԶԲԻԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.
Ճաշը 30 կ. դեղերները ձրի։ Համախարշքով (կոնսիլիում) և օգնութեան համար առանձին։
Հիւանդ տեղի վերցնելու՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿ Ա. ՊԵՏ
Բ. ՂԱՒԱՍԱՐԴԵԱՆ
Վերադարձաւ և սանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 62—100

ԲԺԻՇԿ
Տ. Իսախանեան
Ներքին, երեխայոց և վներակ. հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտ։
Վեկամինսկայա փողոց, № 22, Նաւտիկովի տունը։
(Չ. ու. կ.) 12—15

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրոսպէկտի և Կազանսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կազանսկի փողոցից № 2, (ա. օ.) 103—300

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ
Բժիշկ Միխայել Գեղեվանօվի
Զղային հիւանդների ընդունելութիւնը Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը, Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրդանօվսկայա փող. № 20 Վերայում, Սեփական տ., տելեֆօն № 791։ (ա. օ.) 78—150

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատոր Մօսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բարիշևսկայա փող. № 1, «ոլոժարնի կոմանդի» դիմացը. տելեֆօն № 11. (ա. օ.) 16—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիսական հիւանդութիւնների վերադարձել է արտասահմանից և ընդունում է հիւանդներին ցերեկվայ 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա Սեմենօվսկի փողոց № 20։
(ա.օ.) 4—10

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բիբուտովսկի և Պասկևիչյա փող. № 33/15 տ. Մերիժանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 46—100

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ
Մարտի 3-ին
Հայ թատերասէրաց խումբը կը ներկայացնէ
I
ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ
կօմ. 3 գործող. հեղ. Սուլդուկեանցի
II
ՊԱՇՏՕՆՍ Է ԽՈՒՄՓԱԼԸ
վօդ. 1 գործ. թարգ. Աւետեանի
Մասնակցում են օր.օր. Աբաքա, Նաւարդ, Զեփիւռ. պ.պ. Արմենակ, Դաւրօշ, Անտօնեան, Դուշչեան, Դազարեան, Մ. Տէր-Առաքելեան և ուրիշները։
Սկիզբն է հիշդ 7 ժամին երեկոյեան
Թատրոնի տոմսերն կը նուագ երաժշտեմբ։
Տոմսակների գները 2 ռուբլուց մինչև 20 կ.
Ծախվում են կասայում։
Կարգադրիչ՝ Մ. Տէր-Առաքելեանց
2—2

ԳԻՆՈԳԵՆ ՃԵՄԱՐԱՆԻ մասնագիտական բաժինը աւարտած
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ցանկանում է ունենալ դասեր դպրոցներում, կամ ընտանիքներում, բոլոր առարկաներից։ Հասցէն՝ Николаевскій мостъ, писче-бумажный магазинъ С. Матинянца. 1—1

Լոյս տեսաւ
«Գուտտէնբէրգ» գրավաճառանոցի հրատարակութեամբ
Ա. ԱՄՃԻՏԷԱՏՐՕՎ
ԵՒՐՕՊԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ
Թարգ. Ա. Մխիթարեան
Վաճառվում է «Գուտտէնբէրգ» գրավաճառանոցում։
Գինը 10 կօպ. 1—3

ԿԵՑԻՐ
Բժիշկներ Սօկոլեան, Գօտերատենի, Շմիտի, Բիլի և ուրիշ հետազօտութիւնից երևում է, որ կեցիրը չափազանց նպաստում է կշռի աւելանալուն. կեցիրը գործ է ածվում թոքերի հիւանդութեան, աղիքների կատաղի, արեան պակասութեան, ջրջրուկի, (золотуха) գալկահարութեան, ուժասպառութեան ժամանակ և առհասարակ լաւ ներգործութիւն է ունենում ջղերը հանգստացնելու վրա։ Կարելի է ձեռք բերել Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մելիքեանի փող. սեմինարիայի դիմաց։ Ցանկացողներին կարելի է ուղարկել իրանց բնակարանը։
(հ.կ.) 7—20

Պաշտօնական ծանուցում Աշզ. Պատրիարքարանի Յ. Ի. Գրական Յանձնաժողով

Բարեյիշատակ զրոլարցի Աղա Յովսէփ Իզմիրեանցի կտակին տրամադրութեան համաձայն, Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութիւնն տեղի պիտի ունենայ յառաջիկայ 1907 յուլիս 12-ին, յաւուր ծնի Սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ։

Այն ամեն հեղինակներն ու բանասէրները, որ Ազգ. Դպրութեան և Բանասիրութեան վերաբերեալ օ և է երկասիրութիւններով կը փափագին մասնակցել սոյն գրական մրցանակին, կը հրաւիրվին իրանց աշխատութիւնները ներկայացնել մինչև 1906 յունվարի վերջ։

Ներկայացված երկասիրութիւնը պէտք է ըլլայ բաւական ընդարձակ աշխատութիւններ նիւթի, գիտի և ոճի առատութիւններով պատրաստված։

Նոյնպէս, բարեյիշատակ Գարագաշ էֆ. Խուպէսէրեանի կտակը ի նպաստ վարժարանական դասագրքոյ հատատատել Խուպէսէրեան մրցանակաբաշխութիւնն տեղի պիտի ունենայ մի և նոյն թւականին, Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութեան հետ միասին։

Այս վերջինին համար մրցման ենթարկելի աշխատութիւնք պիտի ըլլան՝ 1) թուքերէն լեզուի համար առաջին դասագիրք մը միջին դասընթացքի համար, և 2) նախնական իրաւագիտութեան դասագիրք մը տարրական դասընթացքի համար, երկուքն ալ մանկավարժական գրութեամբ սոյն ծանուցումն յետոյ պատրաստված, հայ վարժարաններու համար, որ նոյնպէս պիտի ներկայացվին մինչև 1907 յունվարի վերջ։

Երկասիրութիւնք պէտք է ղրկվին նամակաւ առ Ամին. Սրբազան Պատրիարքն ի Կ. Պոլիս, տպագիրներն՝ երեքական օրինակ, իսկ ձեռագիրները՝ մէկ օրինակ, բայց յատակ գրված։

Ցղված գրքեր ու երկեր, մրցանակ ընդունին կամ ոչ՝ եռ չեն դարձուիր։

Պատրիարքարան Հայոց, Կ. Պոլիս 1—3

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

սրանով յայտարարում է, որ այս տարվայ մարտի 6-ին, ցերեկվայ ժամը 12-ին, նշանակված է աճուրդ՝ կոյուղի շինելու Ֆէօդոսիևսկի փողոցում (Կոլիչևյա բակում)։

145 սաժ. բէտօնի խողովակի, հատված	0,33×0,22		
25 » » «	0,16×0,10		

4 դիտողական հոր։

Գրաւոր յայտարարութիւնները, որոնց մէջ նշանակելու է վերև յիշված աշխատանքների առանձին-առանձին գները, պէտք է տրվեն փակ ծրարներով մինչև այս տարվայ մարտի 6-ը։

Սակարկել ցանկացողները կարող են պայմանների հետ ծանօթանալ Վարչութեան Շինարարական բաժանմունքում ամեն մի օր, ցերեկվայ ժամի 12—2. 94 1—3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ԿԵԱՆՔ“
Քաղաքական, հասարակական և տնտեսական օրաթերթի, որ քաղաքական պայմանների շնորհիւ առ այժմ կը հրատարակվի երբի
ՁԱՒԱԹԱԹԵՐԹ
Բաժանորդագրին՝ Թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ., դուրսը տարեկան 3 ր., արտասահման տարեկան 4 ր.։ Ամսական Թիֆլիսում 20 կօպ., դուրսը 30 կ., արտասահման 40 կ.։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Кянкъ», արտասահմանից՝ Tiflis, Rédaction «Kiank». 1—3 (ռ.կ.չ.) Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Իշխանեան

ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բաղուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցերը.	11 ժ. 03 ր. ցերը.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցերը.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաքուում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաքուից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցերը.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցերը.